

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Վ Ա Ն Ի Դ Ե Պ Ք Ե Ր Ը

Տ Ա Տ Ա Ս Կ Ո Տ Ո Ւ Ղ Ի Ն

Փոքր-Ասիոյ բնակիչները ստրկութեան մասնակցան պարզ այն պատճառովն համար, որ չէին գիտեր ըսել՝ ո՛չ:

ՊՆՈՒՏԱՐՔՈՍ

Հայը եղաւ առաջին տարրը՝ որ համատարած ստրկութեան ու մեռելանշարժ կեանքի մէջէն, իր տժգոյն գլուխը բարձրացուց և արիւննուշտ դաժան բռնաւորներու երեսին նետեց „ո՛չ“ խօսքը: Այդ բացասումը՝ որ գերագոյն արժանապատուութեան և մարդկային գիտակցութեան հղոր և վճռական ընդվզումն էր՝ կսպառնայ ամբողջ Փոքր-Ասիոյ շրջանը ընել:

Ապրիլ Համիդ, ամենէն ստորը և անարգը բոլոր փաղիշահներուն, որուն մէջ միացած են տիեզերքի բոլոր ցածութիւնները, տգեղութիւնները—և ոչ մէկ բարեմասնութիւն—առաջ բերելու համար այլանդակ ըստեղծագործութիւն մը, կզգայ թէ բան մը կը փոխուի իր շուրջը, իր ստեղծած և ապրած սպական մթնոլորտին մէջ. մաքրագործումի նոր և առողջ հովեր կը սուլեն, որոնք մեծ և աւելոյ փոթորիկները գուշակել կուտան:

Դուռ, ստրուկ և անզգայ համակերպութիւնը չէ որ կը հոտոտէր փաղիշահը իր պղծութեան բոլոր արհաւիրքներով, „էվէթ էֆէնդիմ“ները չեն որ իր ոտքերուն տակ կը գալարուին անթոյն օձերու պէս և կը յարալիզեն իր գարշահոտ և արիւնով պլշկած ոտները, չէ՛, մարդիկ կը ջանան վեր պրկել իրենց ճակատները արեւին ցոյց տալու, լոյսին կենդանութիւնը ըսպելու համար: Հայը իր „ոչ“ը արտասանեց. երբեմնի կոյր, անմիտ ամբողջ իրեն նշանաբան ընտրեց այդ պարզ ճիշդ՝ զայրոյթով և սպառնալիքով յղի, որ „ես“ի փրկարար գիտակցութիւնն է ամբողջ և որ անօրէնները, սրիկաները ու գահերը սասանեցնելու հրեղէն իմաստը ունի իր մէջ:

Ինչ հոյակապ խոյանք մըն է որ ստեղծեց ստրուկ

մարդուն մէջ դիմադրութեան խրոխտ ոգին. և սակայն այդ աղնիւ թռիչք ինչ տգեղութիւններու, ցեխակոյտերու պիտի ընդհարուէր դեռ այդ լճակոյտ աշխարհին մէջ, որ պառկած կը յորանջէ և որ ամէն օր կը մեռնի իր գիտակցութեանը մէջ, եթէ „ոչ“ը չորոտայ անոր ականջին,

Վանի զարհուրելի դաւաճանութիւնը և հայու մը ձեռքով, այն ալ մեզի պէս գերագոյն անձնւիրութեան ծուծը բամաճ, արևի պայպակը ունեցող և կամքի ու յամառ պայքարին բողբոջները ժողովուրդի մը դէմ, որուն առջև կարելի է միայն սքանչանալ և պայծառանալ, պատմական սարսափարկու երևոյթներէն է որոնք ոչ մէկ պատճառաբանութիւն և չքմեղութիւն չեն վերցնել:

Ճիշդ է որ տարօրինակ ազգ մըն ենք, վարակւած խռովիչ հակադրութիւններով, մեծութեան քով էն գուհիկ փոքրութիւնը, ապշեցնող հերոսութիւններու հետքին վրայ՝ դաւաճան կայէններու քայլերը, զոր խղճմըտանքի աչքը չհալածեր և ազգային ազատութեան մեծապայծառ քայլերուն տակ սողունները, գաճաճները, վատազգիները, և յայտներև ճշմարտութիւններու փէշին վրայ, խեղկատակ զրպարտութիւնը՝ որ լեզու կը խաղցնէ...

Չենք կարծեր սակայն, քսան դար յետոյ, նորէն ետ-ետ երթանք և մեր գիտակցութիւնը բռնադատելով, մեր թքածը լզելով հաստատենք Պրուտարքոսը:

Անցած են այդ օրերը, թէկուզ բոլոր յուդայական Դաւիթները, սահայէլները մէկ ըլլան:

Սրտաձմիկ է մտածել որ անզգամ դաւաճան մը, տարրական բարոյական զգացումէ խորթ, թոյլ տայ իրեն, թքնելով իր գաղտնապահութեան ուստիս վրայ քանդել յեղափոխութեան գաւակներու անհուն և սրտաշարժ գուրգուրանքով տարիներու կերտած շէնքը և դաւաճանել ցեղի մը իդէալին...

Ոչ մէկ ազգ չէ կարող իր ծոցին մէջ սնուցանել այդպիսի շանձունեղ արարած մը. ոչ մէկ թշնամի, օգտուելով սակայն այդպիսի հրեշտածինէ մը, չէ կարող

սիրելի զայն: Համիդի կառավարութիւնը գիտէ շահագործել այդպիսի թշուառական վատորդիները, բայց ժողովուրդները բաւական զգայուն են արհամարելու «խային»ները: Գաւաճանութիւնը անարգ ու դժոխսային գործիքն է,— զուրկ ունէ մարդկային խիղճէ և պատասխանութենէ— անպատիւ վրէժի՝ որ սուգ և դժբախտութիւն կը բերէ միայն: Գաւաճանը սրբութիւն չը ճանչնար, օձի պէս պաղէ և չսիրւիր. ան թոյնը կը կաթեցնէ ամէն տեղ, և գերեզման չունի. մարդկութեան յաւիտենական անէծքը ու արհամարանքը կը հալածէ անոր թշուառական սուերը և պիղծ յիշատակը դարէ դար:

Հայերու մէջ առաջինը չէ որ երևան կուգան այսպիսի զզուելի հրէշներ, մեր բազմաչարչար կեանքին վրայ իրենց անբարոյական անձնասիրութիւնը գոհացնելու, ուրիշներու անկումին վրայ հովանալու, մեր գարշապարները խածնելու, բայց տհերցի Գաւիթը գերազանցեց ամէնքը: Իր անանուն շահատակութեան մէջ, ոչ մէկ խղճի խայթ, այլ շնական չտեսնած լրբութիւն և դիւային բռնիք... Սարուկ անբանութիւնն է որ կը ծաղրէ մեզ...

Այդքան կուռ ուժ ժողովրդի արիւնք-բրտիքով ձեռք բերւած— 300000 փամփուշտ և մօտ 300 հրացան— զոր Գաշնակցութիւնը մթերած էր մեղուաջան, լուիկ, յարատե պապանձեցնող գործունէութիւնով մը և որոնք յոյսի ջահերու պէս կը պաշտակէին ընկերներէ, ըրպէի մէջ ոչնչանա՛ն, դառնակակիծ է և զգալի, բայց ոչ յուսահատական:

Պատմութիւնը և յեղափոխական կեանքը ոյդպիսի չարաբաստիկ արկածներ ու դժնէ կատակներ շատ ունին: Այն ժողովուրդը, որ խոր գիտակցութիւնը ունի իր ճակատագրին և կոչումին և հպարտ է իր կորովի և անսասան հաւատքով, պիտի կրնայ դատել և կշռել գործին ետեւիւնը, թող պիտի չտայ որ անյուսութիւնը և ունայնութիւնը իր սրտին դռները ափ առնեն:

Հայ ժողովրդի արիական զաւակները, իրենց ջղուտ բազուկները կարկառած, լեռան պէս կեցած են իրենց անվճատ զինւորներուն ետեւ, որոնց հոգիի սրտոտ բաբախումները ալիքներու պէս կը թաւալին հայ ժողովուրդին ուղղած իրենց կոչին մէջ: Հոն, գիտակցութիւնը, խանդը և յարատե ու մշտակորով պայքարը կ'ամբարտակին «աւելի մեծ ուժով և թափով նետուելու արիւնտ ուղին» ուր դաւաճանները կը սլքտան: Չէ՞նք զգար արդէն ցեղին բարոյական ուժը, սրտապնդող հրմայրը, առնութիւնը, ապրելու և իդէալի անյուսահատ ճիգը այդ սրտացաւ և արիւնեփ էջերուն մէջ, «սրբելու պատմական ամօթը մեր ճակատներու վրայէն...»: Հոս ցեղի ձայնն է որ կը խօսի և պէտք է այդ ցեղը ապրի ինչ գնով ալ ըլլայ...

Ի՛նչ փոյթ որ դաւաճանութիւնը օձի պէս սողսողայ

մեր շուրջը, երբ գաղափարը, իդէալի հաւատքը, իրենց բոլոր մեծութիւնով և վեհութիւնով ամեհի և անվականդ կը բարձրանան նորէն աւելի ուժեղ բան գընդակները որ կը սուերան նպատակին... Գաղափարը, դժբախտութիւններու, խոչընդոտներու, դաւաճաններու սատակներուն վրայ, կանգուն կը մնայ պղնձակուռ, որ թշուառութեան, գերութեան ու դարերու դժարին ճամբաներուն վրայ ծառացած կը համբուրէ ծովքրտինք ճակատը ուխտաւորին, որ ազատութեան ցուպը կամ հրացանը ձեռքին կը բալէ՛, կը բալէ՛ խաւար և բռնաւոր անգթութիւններու ու սե դաւաճանութիւններու տատասկոտ ու մռայլ ճամբաներէն դէպի սիրոյ և երջանկութեան շող ու վարդագոյն արևագալարները...

ՎԱՆ, Փետր. 24

Հեռագիրները ի հարկէ գուժեցին ձեզի՝ պատահած ծանր դժբախտութիւնը, զարհուրելի դաւաճանութեան մը հետեւանքով:

Փետուար 5, չորեքշաբթի գիշեր, բազմաթիւ ձիաւոր ոստիկաններ, տհերցի դաւաճան Գաւիթի առաջնորդութիւնով կը կոխեն ս. Գրիգոր վանքը, (Վանէն մօտ 20 քիլոմէթր հեռու), ուր՝ դաւաճանին ցուցմունքին վրայ զինւորները թաքստոցէն կը գրաւեն մեծաքանակ փամփուշտ և զանազան իրեղէններ: Վանքը ևս կը կողոպտուի, բայց ոչ ոք չի ձերբակալւիր: Բռնւած փամփուշտները կամբարեն Համուտ աղայի տան բովի զօրանոցին մէջ:

Չորեքշաբթի ցերեկ, երբ ամէն մարդ թէ բաղաբին և թէ Այգեստանի մէջ առօրեայ գործերով էր զբաղած, Գաւիթը ծպտւած զինւորի հագուստով, զօրքին և ոստիկաններուն ընկերացած, կերթայ մէկիկ մէկիկ իր գիտցած թաքստոցները բանդելու: Մէկ-երկու ժամայ մէջ ինը պահարան իր ձեռքով կը բանդէ, պաշարւած դրութեան մէջ դնելով ամբողջ թաղեր:

Գաշնակցութեան մարմինները յանկարծակիի կուգան դաւաճանութեան այս անսպասելի արարքէն:

Հետեւեալ օրը, հինգշաբթի, Գաւիթ սիրտ առած իր առաջի անպատիւ փորձէն, կը սկսի մնացած պահեստներն ևս ցոյց տալ ու կանցնի Աղւեսաձոր թաղ: Կեղր. կօմիտէն մէկ երկու թուրքիկ խումբ հանելով կուզէ յանկարծակի բերել դաւաճանը և շանսատակ ընել, զինւորներուն խնայել պատելիբով:

Առաջին օրը, երբ Սանդի փողոց, բազազ Կէօրկանց տունը պաշարած, խուզարկութիւններ կ'ընէին, արմենականներու ղեկավար Սեպուհը (Երուանդ քէօսէեան) կուշտի տունէն ելած պահուն, զօրքերէն գնդակահար կսպանուի. վրայէն կը կողոպտեն տասնոց ասրճանակ մը, քսան ոսկի և հագուստները:

Աղէսաձոր՝ տունէ մը կը հանեն բաւականաչափ ուժանակի խմոր և փամփուշտ, յետոյ նոյն թաղի մէջ նալբանդեանենց տունը կը կոխեն, ուր կը բնակէր հեռագրատան չափուշ Արթինը, և պահեստի մթերքին մէկ մասը—որովհետև անհնար էր մէկ կառքով փոխադրել—կառքի մը բեռցած կը տանին դէպի Խաչ փողոցը: Մնացածը կը յանձնեն զօրքի հսկողութեան:

Կառքը կառաջանայ Սահակ բէկի դռան առջև՝ ուրէն Խաչ փողոցը կերթայ: Թուուցիկ խուճար փողոցին երկայնքը դիրք կը բռնէ սպաննելու Գաւիթը. առաջին կրակը սպարդիւն կանցնի և փոխանակ՝ կսպաննւի ոստիկան մը: Կառքի սպրանքը ազատելու համար, ռուճը մը կը նետուի Սահակ բէկի տան դիրքէն, կառքը կը փշուրի, մէկ ձի կսպաննւի, իսկ զօրքը մօտակայ թիւրք թաղը կը փախչի:

Երեկոյեան, թրքական ժամը 8-էն կսկսի կռիւը զօրքերու և յեղափոխականներու մէջ և դաւաճանը թիւրքերու շարքերու մէջէն կը կրակէր: Այդ կռւի միջոցին Գաշն. զինւորներ և կամաւորներ կը մանեն և ջարդուած կառքի զինամթերքը կը վերցնեն կրտանին:

Կռիւը կատաղօրէն կը շարունակուի, մինչև որ մութը կը կոխէ: Աճապարանքի միջոցին տոպրակ մը ուժանակ կը մոռցնի գետինը: Երբ նոր զօրքեր օգնութեան կը հասնին Խաչ փողոցի կողմէն, կամաւորներ արդէն նախօրօք կտրած էին ճամբան:

Երկուստեք զնդակահարութեան միջոցին մէկ գընդակ պատահմամբ կը դպի ուժանակի տօպրակին: Պայթիւնը սարսափելի էր. Սահակ բէկի և դիմացի թիւրքի մը տան պատերը կը փլին, 10 վայրկեան հեռաւորութեան վրայ տուներու ապակիները կը փշուրին. քաղաքի և Այգեստանի տուները ժաժի պէս ցնցեցան, իսկ ձայնը լսելի եղած է մինչև 6 ժամ հեռուն:

Խաչ փողոցի կողմէն եկող զօրքը վախէն ետ կը դառնայ, իսկ Սահակ բէկի տան դիրքը պահողները կը ձգեն կը հեռանան:

Երեկոյեան տասն և երկուքէն յետոյ կռիւը կը մարի:

Միւս օրը կառավարութիւնը կը դադրի խուզարկութիւններ ընելէ: Յեղափոխականները Արթին չափուշի տան կիսատ պահեստը կը վերցնեն և մնացած պահեստները կը քանդեն:

Մտնուած ռազմամթերքի ընդհանուր բանակն է մօտ 270 զէնք և 300,000 փամփուշտ:

Ուրբաթ օր ժողովուրդը իրար կանցնի՝ վախնալով նոր խուզարկութիւններէ և արիւնահեղութիւններէ, բայց ոչինչ չը պատահեցաւ:

Հինգշաբթի երեկոյեան երեքուկէս ժամ տևող կռւի միջոցին սպաննուած են թիւրքերէն մօտ 15 մարդ և մեծ թւով վիրաւոր: Հայերէն կորուստ չը կայ: Միայն դէպքեր ալ կան յետոյ ըլլալը խուճարի սպաննելէ:

Սահակ բէկի տունը՝ նախապէս կողոպտելէ յետոյ՝ Պատգամաւորութիւն մը դիմած էր նաև կուսակալին թալանելու համար, կուսակալը մերժած է:

Քաղաքի և գիւղերու յարաբերութիւնները մինչև մէկ շաբաթ կտրուած էին, յաջորդ շաբթուն երթուկերը բացեցաւ:

Մեծ թւով փախստականներ կան: Գաւիթ՝ Մահմուդ բէկի տունն է այժմ և միշտ սպառնալիքներ կրնէ նորանոր չարիքներ հասցնելու: Այս մարդը հինգ տարի է Գաշնակցութեան մէջ կը գործէր, և վերջերս հասարակ պատճառով գրժտելով մէկ քանի ընկերներու հետ՝ դիմեց այդպէս ամենաստոր և ահաբեկի դաւաճանութեան, գիտցած պահեստները ցոյց տալով:

Չորս հոգի միայն ձերբակալուած են: Իբր թէ պատրիարքարանէն հեռագիր եկած է առաջնորդարան և սուլթանէն՝ կուսակալին թէ «կայսերական ներողամտութեամբ դէպքէն և խուզարկութիւններէն առաջ եկած յանցաւորներուն ներում շնորհուած է, թող չը կասկածին, ազատ են»: Ժողովուրդը սակայն, հին փորձառութիւններէն շատ խրատուած է:

Կրսւի թէ այս մեծ դաւաճանութեան առիթով կուսակալին պատւանշան տրուած է, իսկ սևահագի Գաւիթին 500 ոսկի նւէր և 15 ոսկի ամսականով ոստիկան— յիսնապետի պաշտօն...

Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ա Վ Ա Ն Խ Մ Բ Ե Ր Ի Ն

Մեղքը մեր չէ, ամէնք հրէշիմ նա պատճառ դարձաւ արեւամ կրկեսիմ

ընկերներ!

Մեր կեանքի արնոտ թատերաբեմի վրայ դուք ակնատես եղաք մի եզակի ողբերգութեան, մարդկային հոգու հրէշային դաւաճանութեան:

Գուք տեսաք թէ ինչպէս մարդ-գազանը իր ձեռքերով մէկիկ-մէկիկ կը քանդէր յեղափոխութեան տարիների կառուցած շէնքը: Տեսաք թէ ինչպէս ընկան արիւնշաղախ շատ անմեղ զոհեր: Երկու դրացի ժովուրդների—հայի— և թիւրքի—խաղաղ աշխատանքը ընդհատեց, տիրեց ահ ու սարսափ, արիւն ու արցունք: Գուրս եկան ջարդերի ուրականը և աւերակների հեռապատկերը: Լացին ու ողբացին բոլորը մեծ կորուստի առջև: Անէծքի ու նզովքի շանթերը իրար պլլւած վեր բարձրացան բոլորի կրծքերից: Հառաչանքներ ու մըրմունջներ իրար խառնեցան և այդ բոլորի միջից դաւաճանի դժոխային բրբիջն էր որ կը լսէր բարձրաձայն:

Իր բորբոքած հրէշաւոր կրքերը հանգստացուց շա...

Իր ֆուֆայլուկ «ես»ը յագեցուց արեան արցունքի գետեր կազմելով:

Նա որ երկար տարիներ յեղափոխութեան ծոցը անաւ, անոր կաթով կերակրեց, նա որ երկար ատեն մեր շարքերի մէջ ապրեց ճշմարիտ յեղափոխականի գիմակով, նա այսօր անցեր է մեր դահլիճների գիրկը, դարձեր է ժողովրդի անէծքին ու նզովքին, թուրին ու մուրին արժանի մի ճիւղադ:

Թո՛ղ լիրբ բռնակալական կառավարութիւնը իր անխաղած ձեռքերով շոյէ անոր կոպիտ ու գազանական ետը, թող ժողովրդի թշնամիներ լիուլի վարձատրեն անոր հազարաւորների սրտերը խոցոտելով: Իսկ ժողովուրդը գարշանքի ու զզւանքի առարկայ պիտի դարձնէ դաւաճանի սև հոգին և անոր դիակը իր անհանդարտ ոտքերի տակ տրորելով պիտի փոշիացնէ...:

Այի-բէկի դաժան գործունէութեան երկար շրջանը այնքան ոճիր էր կրցաւ իր մէջ պարփակել որքան դաւաճանի անարգ մտքի խելապատակը:

Մեր արնոտ պատմութեան մէջ սև ու մռայլ մի էջ ևս բացւեցաւ:

Մեր բաց ճակատի վրայ մի սև գիծ, ամօթի անջինջ կնիք դրոշմւեցաւ:

Եթէ կայ անդարմանելի վէրք մեր սրտերի խորքը, դա այն տխուր գիտակցութիւնն է որ ոչ թէ սուլթանական ռէժիմ, Երլտրդի պալատ, ալ մենք ծնանք հրէշը, մեր շարքերից էր որ դուրս պրծաւ մարդ-գազանը և գնաց ձեռք տալու ժողովրդի դահլիճների հետ: Սակայն չը յուսահատուենք:

Այսպիսի կատաստրոֆներ, յեղափոխական գործի հսկայական վիժումներ անբաժան ճակատագիրն են կազմեր բոլոր ազգերի յեղափոխական պատմութեան:

Յեղափոխութիւնը շատ է տեսեր դաւաճաններ, շատ է սայթաքեր իր նեղ ու փշոտ ճամբու վրայ, շատ անդարմանելի կորուստներ է տւեր բայց երբէք կանգ չէ առեր:

Նա կրկին ու կրկին թափով վերածնելով, աւելի ևս ուժով շարունակեր է իր արնոտ ուղին:

Որքան մեծ լինի կորուստը, որքան տաժանակիր լինի մեր աշխատանքը, այնքան ուժգին պիտի լինի ապագայ հարւածը, այնքան պայթուցիկ նիւթերով լեցւած պիտի լինին մեր վրիժոտ կրծքերը:

Ընկերներ!

Շարունակենք գործը նոր եռանդով, նոր ու կրկնակի թափով:

Սրբենք պատմական ամօթը մեր ճակատի վրայից: Գէն վանենք սարկութեան կնիքը մեր սրտի խորքերից...:

Վռնտենք մեր շարքերից բոլոր դիմակաւոր դաւաճաններին, սրիկաներին և մասնիչներին...:

Մարքենք յեղափոխական ասպարէզը սև ու մութ ուժերի տիրապետութիւնից...:

Բարձրացնենք յեղափոխական գործը անձնական գծուծ հաշիւներից աւելի բարձր, անմատչելի բոլոր ստորաբարձ սողուններին, որպէսզի այդ սողունները չը ծնեն Գաւիթի նման դաւաճան հրէշներ:

Թո՛ղ մեր մեծ կորուստը մի դաս լինի մեզ համար այսուհետև մեր վստահութեան քէն ատան կերպով չը ծախելու:

Շարունակենք գործը այժմ աւելի հրահանգաւ, աւելի խնամքոտ:

Սեղմւած, վստահելի շարքեր միայն...

Տգիտութեան տեղ յեղափոխական գիտակցութիւն:

Անձնական շահի տեղ ժողովրդական բարօրութիւն, համայնական շահի գիտակցութիւն:

Յեղափոխական ամբոխի տեղ, յեղափոխական փորձամասնութիւն:

Եւ դաւաճանների փոխարէն ծնունդ տանք յեղափոխական անկեղծ ու գաղափարական գործիչներին...

Կեցցեն յեղափոխական շարքերը!

Թո՛ղ կորչին բոլոր դահլիճներն ու դաւաճանները կորչի բռնապետութիւնը!

Հ. Յ. Դ. ԲԱՂ. ԿՕՄԻՏԵ

11
19—08
1

Պ Ա Տ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Ս Ր Ո Ց Ո Ղ Ն Ե Ր

Պատմութիւնը դրւեց... Մարգարէները, ժողովրդի կեղծ պաշտպանները, դաւաճանը և բոլոր սև ու մութ ուժերը միացած դէպքի պատմութիւնը կը գրեն...:

Օ՛հ, այդ պատմութիւնը... դէպքի պատճառների այդ ձևակերպումը: Ամէն բանը վաղուց յայտնի էր: Նիկարի մաստուններուն, Ինչո՞ւ հեռուն գնալ, ինչո՞ւ քիչ մը բարեկեցիկ ըլլալ, քանի որ շաբլոն մեղադրանքի ձև կայ, քանի որ խիղճ չը կայ...:

—Յանցաւորները դրսեցինքն են!—Որովհետև թողած իրենց տունն ու տեղը, ապագան ու երջանկութիւնը, իրենց կեանքն ու արևը բերել ու թաղել են այս յաւիտենական գերեզմանատունին մէջ: Այս խաւար ու տարտարոս Բաբելոնի մէջ... Տարիների տանջանքը, թափուած արիւնն ու քրտինքը, քաշուած ցաւերն ու վիշտերը, Ֆիզիքական ու հոգեկան հիւժուճները, բոլորը, բոլորը, մուցւած են... խաչ հանեցէք արանց...:

—Յանցաւորութիւնը Գաշնակցութեան բիւրօկրատիզմի մէջն է, անոր «կազմակերպութեան յուրի սիտատի մէջն է» (Երեւի ապակեգրոնացում):—Այն Գաշնակցութիւնը, որ խոսքով ու գործով անհատների ու համայնքի լայն ազատութիւնն ու ինքնադործունէութիւնն է քարոզեր, որ անասման չափով լծույլ է աւեր իր ներսում ամեն տեսակի մտաւոր—տեսական հարցերու շուրջը անպայման ազատութիւն... այն Գաշնակցութիւնը, որ պաշտօնականութիւնից առաւել ընկերականութեան է տեղ աւեր, որ միակն է եղեր իր ընկերական վերաբերմունքով, իր պարզութեամբ և շիտակութեամբ այս կեղծաւորութեան ու «պօլիտիկայի» աշխարհին մէջ...:

Պատմութիւնը կը գրուի... այն ալ դաւաճանի բերնով անոր անարգ գրչով, լաւ լսեցէք:

— Իր ըրածը «դաւաճանութիւն» չէ, այլ «բարերարութիւն», «ղէնքերը ժողովուրդին կտորել տալու համար էր», ինքը փրկեց ժողովուրդին. ապագայի մէջ պիտի հասնան «մեծ բարերարին» և արձան պիտի կանգնեցնեն...

Հրճանքով կը խօսին:

— Պատուոյ խօսք է տւեր, տեղացիներէն ոչ մէկին չը ձերբակալել, իբր թէ ժողովուրդին հետ դարձ չունի...

Աւանց կարմրելու կը պատմեն:

— Մեզ տեսաւ, բարև տուաւ, քէֆը հարցուց...

Ո՛ւր է քաղաքացիական զգացմունքի և խղճի նշոյլը, ո՛ւր է յեղափոխական գիտակցութիւնը...

Չակերտաւոր «յեղափոխականները» ու խիկար իմաստուններ, դաւաճաններ ու սրիկաներ դաշնակցեր են, բարձր ալ նոյնատեսակ արամաբանելու պատիւն ունին:

— Յանցաւորները դրսեցիներն են, խտուրթիւնները միայն դրսեցիներու դէմն է. մենք ենք ժողովրդի միակ բարերարներն ու պաշտպանները...

Կեցցէ՛ մութ ոյժերու դաշնակցութիւնը!!! Կեցցէ՛ խաւարի թագաւորութիւնը!!!

Բարոյական հիւանդութիւններու համաճարակ է, մարդկանց դանկերու մէջ փոթորիկ է, սև եզը ընկած է, շատ պեցէք դանակաւորներ!!!

Բայց և այնպէս յեղափոխական նէմէղիդան մեծ երկունքի մէջ է: Ատղը նա դուրս կուգայ դաւաճութեան խորունկ խորանէն, «մահ կամ ազատութիւն» գուռով:

Դաշնակցեցէք մութ ու խաւար ոյժեր, արամաբանեցէք այնպէս, ինչպէս դաւաճանը կը արամաբանէ... ողբայեք ձեր հանգստեան կորուստը, մեռելներ թողեցէք. մենք ձեզ հանդիստ կը թողունք այդ «երջանիկ մեհակութեան մէջ»...

Մենք կենդանի գործ ունինք, վրէժ ունինք լուծելու, մենք աւերակ ունինք վերաշինելու...

Դուք ձեզ անմահացնելու համար պատմութիւններ դրեցէք...

Իսկ մենք պատրաստուինք մեծ ազատամարտի արշալոյսին հպարտութեամբ դիմաւորելու:

Հ. Յ. Դ. ՔԱՂ. ԿՕՄԻՏԷ

II
19-08
6

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր
(Երապակաւի քերթեր)

Մարտ 23-ին, Աւնի հայ յեղափոխականները իրենց մէ մասնիչ մը հալածելիս, կրակ ըրին այն տանը վրայ ուր մատնիչը ապաստանած էր: Մատնիչը վիրաւորւած է: Պաշկպօզուկները միացած ժանդարմներուն՝ օգտուեցան առիթէն ընդհանուր յարձակում մը ընելու համար հայերուն դէմ: Սպանւած են 33 հոգի և վիրաւորւած 8: Զօրքերը միջամտեցին և կասեցուցին ջարդը: Մեծ անհանգստութիւն կը տիրէ շրջակայ գիւղերու մէջ:

— Քրանսայի, Ռուսիոյ և Անգլիոյ փոխ-հիւպատոսները վալիին նօթա մը ղրկեցին պահանջելով որ ապահովէ երաշխաւորութիւնը: Հիւպատոսները ընկերացան փախստականներուն իրենց տունները վերադառնալու համար:

— Իրենց հիւպատոսներու զեկուցման վրայ որ կարտայայտէր հայ ժողովրդի նորէն յարձակում կրելու և կոտորելու երկիւղը, Պօլսոյ Քրանսայի, Ռուսիոյ դեսպանները և Անգլիոյ գործակատարը, մեծ-վեզիրին սուղադրութիւնը հրաւիրեցին կացութեան վրայ և պահանջեցին պատժել յանցաւորները և հրամայել միջոցներ ժողովրդի ապահովութեան համար: Մեծ-վեզիրը իսկոյն հրամայեց վալիին և զինւորական հրամանատարին միջոցներ ձեռք առնել և օգնական զօրքեր ղրկեցան:

ՄՕՅԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ե Ր Կ Ո Ւ Ց Ե Ղ

(Մարդարանական գործօնը հասարակական զարգացման մէջ)

Մարդկային ցեղեր կան, որոնք անանական տեսակների պէս առաջ են եկել զուտ բնական, կօսմբական պատճառներից, միլիօնաւոր դարերից իվեր, երբ հեկկելեան Homo Alalus-ը (կապկանման, անխօս մարդը), կամաց-կամաց կերպարանափոխելով, դարձել է խօսուն ու խոհուն էակ և հետագհետէ տարածւել է երկրագնդի վրայ: Նրանք այսօր երևան են գալիս իրենց տարբեր առանձնայատկութիւններով—մէկը աւելի շարժուն, միւսը՝ նւազ, մէկը աւելի ընդունակ առաջադիմելու, միւսը նւազ մէկը արդէն փայլուն ու բարգաւաճ իր մտաւոր. կուլտուրական կարողութիւններով, միւսները դեռ խարխափելիս նահապետական տգիտութեան, թշւառութեան, երբեմն նոյնիսկ այլասեռման մէջ...

Բնութեան մեղքն է... Այդ զարհուրելի խտրութիւնը սահմանողը տիեզերական կոյր, անկօնտրօլ մեքենան է. հետևապէս, պատասխանատուութեան հարց չի կարող ծագել այդ նւազ ընդունակ թշւառ ցեղերի պաթօլօգիական (հիւանդական, բառիս ընդարձակ նշանակութեամբ) վիճակի հանդէպ: Բնութիւնը մի անգամ ընդմիշտ այնպէս է սահմանել—մէկին աւելի է գուրգուրել միւսին նւազ, մէկին աւելի է օժտել դրական յատկութիւններով, քան միւսին—և դա կոյր, մեխանիքական ուժերի մի ճակատագրական նախասահմանումն է, որի մէջ մենք գիտակից էակներս ոչինչ երբէք չենք կարող փոփոխել...

Բայց կան երկու ուրիշ ցեղեր, որոնք առաջացել են մարդկութեան ծագումից շատ աւելի ուշ, այն ժամանակներում, երբ արդիւնագործութեան միջոցների զարգացման շնորհիւ սկսել են ամենուրեք քայքայել գոյութիւն ունեցող համայնական կարգերը, և հողը համայնի ընդհանուր սեփականութիւնից վերածւել է կամաց-կամաց—պատերազմի, բռնութեան, նաև անհատական ուժեղ նախաձեռնութեան ճանապարհով—վերածւել է մասնական սեփականութեան:

Երկու ցեղերը խորապէս անհաւասար են. մէկը տէր նիւթական բոլոր հարստութիւններին՝ ապրում է պերճանքի ու առատութեան մէջ, առանց համարեա աշխատելու, միւսը աշխատում է ամբողջ կեանքի ընթացքում և դարձեալ տառապում է չքաւորութեան մէջ: Մէկը բարձր իր մտաւոր կուլտուրայով, միւսը խեղճ, տգէտ ու անօգնական: Երկուսն էլ կան ամեն մի երկրում, ամեն մի համայնքում, ամեն մի ազգի մէջ... Երկու տարբեր ցեղ... թէև միլեոնոյն մտից ու արիւնից: Մէկը հարուստների, միւսը՝ չքաւորների, աղքատների ցեղը...

Նրանք արդէն ծնունդ են ոչ բնական, տիեզերական ազդեցութիւնների, այլ հասարակական, այսպէս ասած, արւեստական գործօնների: Նրանց ծննդաբերութեան մէջ, ինչպէս անհասարակ ամբողջ մարդկային պատմութեան պրօցեսում, դեր են խաղա-

ցել և՛ օք՛եկտիվ՝ հասարակական և՛ սուք՛եկտիվ՝ անհատական ուժերը: Պարզ ասենք դեր են խաղացել, մի կողմից՝ տնտեսական, արդիւնաբերական ուժերի զարգացումը, միւս կողմից՝ իրենք մարդիկ, որոնք իբրև գիտակից էակներ, ընդունակ են հակազդել երևոյթների ու անցքերի վրայ և որոշ վայրկեաններում առաջ բերել ամբողջ յեղաշրջումներ հասարակական յարաբերութիւնների մէջ: Մարդիկ միշտ ի գործ են դրել իրենց ահագին ազդեցութիւնն ու հակազդեցութիւնը, սկսած այն առաջին արկածախնդիր ռազմիկից, որ իր բուն թիկնապահներով արշաւել է մէկ կամ մի քանի խաղաղ համայնքների վրայ և իւրացրել է նրանց գոյքը, նրանց աշխատանքի միջոցներն ու արդիւնքները, բուն ուժով տիրացել է նրանց հողերին և գերի վարել համայնքի անդամներին:

Երկու ցեղերի ծնունդը ուրեմն, բոլորովին տարբեր կերպարանք ունի այստեղ: Ոչինչ չըկայ ճակատագրական, մի անգամ ընդմիջտ նախասահմանած... նրանց ցաւոտ հակադրութեան մէջ մարդիկ իրենց բաժին դերն ունին և այդ մարդիկ, հետևապէս, վաղ թէ ուշ պիտի փորձեն արմատապէս վերացնել այդ հակադրութիւնը, սահմանելով հասարակութեան մէջ լիակատար հաւասարութիւն...

«Ցեղ» յորջորջումը ներկայ դէպքում պատկանում է բրիտանական յայտնի մինիստր լորդ Բիկօնսֆիլդին: Բայց Բիկօնսֆիլդ այդպէս ընորոշում էր երկու պատմական դասակարգերը—բուրժուազիա—պրոլետարիատ—սոսկ նիւթական հակադրութեան տեսակէտից: Նա տեսնում էր իր սեփական հայրենիքում այդ հակադրութիւնը հասած իր գազաթնակէտին. տեսնում էր մի կողմից սև, կիսաքաղց և կիսամերկ զանգւածը, միւս կողմից նիւթական խրախճանքների անձնատուր եղած փոքրամասնութիւնը... Տասնեակ տարիներ են անցել հռչակաւոր դիպլոմատի այդ կլասսիկ յայտարարութիւնից ի վեր. հասարակական գիտութիւնը նոր-նոր նւաճումներ, նոր գիւտեր է արել: Էկօնօմիկայի, տնտեսագիտութեան հետ միասին ասպարէզ է իջել և անտրօպօլօգիան, մարդաբանութիւնը, որ ուսումնասիրում է դասակարգային յարաբերութիւնները ուրիշ տեսակէտներից,

Մի շարք իտալիացի ու Ֆրանսիացի հետազոտողներ զբաղւել են և շարունակում են զբաղւել այն հարցով՝ թէ ի՞նչպէս է անդրադառնում տնտեսական վիճակը աշխատաւոր ու չքաւոր դասակարգի Ֆիզիքական էութեան վրայ և թէ ի՞նչ արբերութիւն կայ երկու դասակարգերի միջև զուտ ֆիզիքական, անտրօպօլօգիական տեսակէտից:

Հետազոտութիւնները տւել են արդէն մի շարք խիստ ուշագրաւ արդիւնքներ: Գուրս է գալիս, օրինակ, որ կեանքի միջին տևողութիւնը հարուստների մէջ աւելի մեծ է, քան աղքատ դասակարգի մէջ, որ ընդհանուր մահացութիւնը աղքատների մօտ միշտ աւելի բարձր է, քան հարուստների աշխարհում. որ 70 տարուց աւելի պրոդիկների մէջ առաջին տեղը բռնում են արեղաները, քահանաները և առհասարակ հոգևորականները, նրանց հետ և հարուստ սեփականատէրերը: Համեմատաբար բիջ թիւ են կազմում այդ կարգի մէջ աշխատաւոր դասակարգերը:

որ, վերջապէս, զինւորական ծառայութիւնից դուրս մնացողները (ֆիզիքական թերութիւնների կամ հիւանդութիւնների պատճառով) մեծամասնութեամբ կազմում են նոյն աշխատաւոր դասակարգի մարդիկ... Նոր լոյս տեսած իտալացի Նիչեֆօրօյի մարդաբանական մի աշխատութիւնը, «*Sui Contadini*», պերճախօս փաստերով հաստատում է այդ իրողութիւնները, հաստատում է, որ ֆիզիքական, ֆիզիօլօգիական, մտաւոր ու հոգեկան տեսակէտներից աշխատաւոր և աղքատ ընդհանրութիւնը ցած է կանգնած կուշտ, ապահով դասակարգերից: Աղքատները, հարուստների հետ համեմատած միջին հաշուով ունին աւելի փոքր հասակ, փոքր է նոյնպէս նրանց մարմնի յարաբերական ու բացարձակ կշիռը, փոքր է շնչողական կարողութիւնը, փոքր է ուժը, փոքր է նրանց ցոյց տւած դիմադրութիւնը՝ յոգնութիւններին, հիւանդութիւններին ու մահաւան՝ փոքր են նաև գլխի շրջագիծը, ճակատի լայնութիւնը, գանգի տարողութիւնը և այլն: Բացի դրանից, աղքատները համեմատաբար աւելի հարուստ են կմախքային տարկանոնութիւններով, մանաւանդ դէմքի ու գլխի վրայ, որից առաջ են գալիս կերպարանքի, ֆիզիօնօմիայի այլանդակութիւնները:

Որտեղից են գալիս աղքատ տարրերի այդ ֆիզիկօհոգեկան տարկանոնութիւնները: Ասկած չը կայ, որ այդ տարրերի հոգեկան ստորադասումը հետևանք է նրանց ֆիզիքական ստորադասման, նրանց մարմնի թերութիւնների, որովհետև, ճշմարիտ է ասւած, առողջ մարմնի մէջ միայն կարող է բարգաւաճել առողջ հոգի: Ասկած չը կայ նաև, որ ֆիզիքական այդ թերութիւնները աշխատաւոր, աղքատ դասակարգերի մէջ հետևանք է կեանքի այն եղանակի, որին դատապարտւած են նրանք: Ատտ սնունդ, խեղճ, ողորմելի հագնւածք, բնակարանները վատառողջ աշխատանքի ժամանակամիջոցը երկար, յաճախ թունաւորումներ աշխատանքի միջոցին (հանքատեղերում և այլն), վաղաժամ սկսած աշխատանք, ոչ մի արհեստագիտական կրթութիւն, ակամայ անաշխատութեան երկար շրջաններ, առանց որևէ ապահովութեան վաղւան օրւայ մասին—մի շարք բարդ պատճառներ, որոնք ստեղծում են տնտեսական, ֆիզիքական, մտաւոր ու հոգեկան մըշանջնաւոր թշւառութիւն...

Այո, մի տարբեր, մի առանձին «ցեղ»... Այդպէս է ժամանակակից կապիտալիզմի օրէնքը: Հակամարտութիւնը երկու խոշոր դասակարգերի միջև միմիայն տընտեսական չէ, նա չի պտտւում միմիայն հացի ու ապահովութեան խնդրի շուրջը, այլ նա միաժամանակ և օրգանական է, մարմնաւոր ու հոգեկան:

Հասակի աճումը աղքատ դասակարգի մէջ ուշանում է կամ իսպառ կանգ առնում, եթէ սնունդը վատ է և անբաւարար: Ապացոյց՝ որ ծայրայեղ աղքատները զինւորական ծառայութեան մէջ, մանաւանդ առաջին տարին սկսում են յանկարծ աճել, բարձրանալ, նրանց կշիռն էլ աւելանում է և նրանք վերադառնում են ծառայութիւնից զգալի կերպով և ըստ ամենայնի կադրուրւած... Այդ թշւառ պարիանների համար զինւորի չարքաշ աշխատանքները, զօրանոցի կեանքն անգամ թւում են երանութիւն...

Ահա այդպիսի անհասարկ պայմաններում է մըլ-

ուում դասակարգային կուլուր մի կողմից տնտեսական թշուառութիւն, որ ուղեկից է մի ստորադաս «ցեղի», միւս կողմից՝ տնտեսական ճոխութիւն, կապւած Ֆիզիքական ու մտաւոր բարձրութեան հետ...

Այդ դարձուբերի վկայութիւնները չեն կարող վհատեցնել չքաւոր դասակարգերին այլ աւելի ևս նախանձանդիր կը դարձնեն նրանց իրենց դատի, սօցիալիզմի առաջադիմութեան համար։ Աերը յիշած չարիքները ճակատագրական ու յաւիտենական չեն։ Սօցիալիստական կուսակցութիւնները պարլամենտներում միշտ աւելի և աւելի ոյժ կը տան աշխատաւորական օրէնսդրութեանը, կը բարելաւեն աղքատ դասակարգերի նիւթական վիճակը, դրա հետ միասին աստիճանաբար կը բարձրացնեն և նրանց Ֆիզիքական ու մտաւոր ու հոգեկան վիճակը և այդպիսով ըստ ամենայնի կը հասունացնեն նրանց՝ ապագայ մեծ նւաճումների համար։

Անցան այն ժամանակները երբ սօցիալիստ առաքեալները իրենց բազմաթիւ երկրպագուների հետ ազդարարում էին յայտնի անմտութիւնը՝ թէ սօցիալական յեղափոխութիւնը առաջ է գալու հէնց պրօլետարիատի ծայրայեղ թշուառացումից ու քայքայումից... Այդ տեսակ յեղափոխութիւնը, այդ տեսակ պրօլետարիատի ձեռքով տարած յաղթանակը—եթէ միայն տարւի—չի կարող տեղողական լինել։ Նախքան քաղաքական իշխանութիւնը իրենց ձեռքն առնելը, սօցիալիստական բովանդակ աշխատաւորութիւնը հսկայական տարածութիւն ունի անցնելու, ուր աստիճանաբար պիտի բարձրւին նրա կենսաբանական պայմանները, պիտի դաստիարակւի նրա միտքն ու հոգին, պիտի մշակւի ու միշտ աւելի ու աւելի նրբանայ, աղնւանայ նրա հաւաքական գիտակցութիւնը։ Այդ պայմանով միայն կարող է նւաճել և ամուր, հաստատուն հողի վրայ դրել ապագայ սօցիալիստական հասարակութիւնը և այն ժամանակ «երկու ցեղերը» իմի կը ձուլւին, կը կազմեն մարդ—քաղաքացիների յաւիտենական երջանիկ «ցեղը»։

ՍՕՑԻԱԼԻՍՏԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ

Եթե իրողը մամակ

Ամիտիելով մի քանի խօսքով նախորդ նամակների բովանդակութիւնը, ես կարող էի ասել հետևեալը։

Բոլոր ժողովրդին հարկաւոր է ազատութիւն և գիտութեան լոյս։ Բանւորներին հարկաւոր են օրէնքներ, որոնք պաշտպանէին նրանց՝ գործատէրերի բռնութեան ու կամայականութեան դէմ։ Գիւղացիներին հարկաւոր է հող։

Սակայն այդ բոլոր կարիքների գոհացումը չի կարող տալ պատշաճաւոր արդիւնք, եթէ արմատապէս չը փոփոխուին այն հիմունքները, որոնց վրայ կառուցւած է այսօր մեր պետական տնտեսութիւնը (Ֆիւնանսական սիստեմը և քաղաքականութիւնը)։

Իւրաքանչիւր պետութիւն ունի իր ընդարձակ ու բարդ տնտեսութիւնը, իր եկամուտներն ու ծախքերը, որոնք գնում են գոհացում տալու երկրի բազմատեսակ կարիքներին (գործադիր, օրէնսդիր ու դատաստանական

իշխանութեան կազմակերպում, զօրք, լուսաւորութիւն, հաղորդակցութեան ճանապարհներ և այլն)։

Մեզ մօտ Խուսաստանում պետական գանձարանի գլխաւոր հարկատուն հանդիսանում է հարկւր միլիոնաւոր գիւղացիութիւնը—«գիւղը»—մեր ամբողջ պետութեան այդ շտեմարանն ու սնուցանողը։

Իսկ գիւղի կարիքների համար՝ այդ գանձարանից յետ են տրւում միայն ողորմելի փշրանքներ, օրինակ, ներկայ տարւում «գիւղի» կարիքների համար (հողային կարգաւորման ու հողագործութեան գլխաւոր վարչութիւն), երկու ու կէս միլեարդ բիւլղէից սահմանւած է ընդամենը 35 միլիոն միայն։

Եւ ընդհակառակը. «քաղաքը» վայելում է մեր կառավարութեան կողմից ամեն տեսակ ուշադրութիւն։ Գործարանային—հանքային արդիւնագործութեան համար ծախսւում են ահագին միջոցներ։ Այդպէս գանձարանը չպիտանց առատաձեռն է և այդ առատաձեռնութեանը վերջ էի նախատեսւում։

2ր կարծէք, սակայն, թէ «քաղաքի» մասին հոգալով կառավարութիւնը օգնութեան է դալիս ամբողջ քաղաքային աղքատնակութեանը։ Եւ չը կարծէք նոյնպէս, թէ «գիւղից» ձեռք վերցնելով, նա անուշադրութեան է մասնում այն բողոքի նորոնք ապրում են հողի աշխարհում։ Այն իհարկէ «գիւղի» մէջ այն եղբ, որից ետեւ մարթի են մաշկում—աշխատաւոր գիւղացիութիւնն է։ Իսկ «քաղաքում» նոյնպիսի մի վիճակ բաժին է ընկած գործարանա—հանքային բանւորներին և առհասարակ ամբողջ քաղաքային խեղճութեանը։

Եւ նոյն «գիւղում» սիրտապիտ հորթը, որ միանգամից ծծում է երկու մայրերի—պօմէշիկներն են (կալւածատէր) ընդհանրապէս և աղնականների «սիրտագործ դասը» մասնաւորապէս։ Նոյն «քաղաքում» իշխանութիւնների բարձր հովանաւորութեան տակ բարգաւաճում են պ. պ. կապիտալիստները՝ գործարանատէրեր, հանքատէրեր, «անւանի» վաճառականներ, բանկիրներ և այլն։

Հետևարար՝

Մտացութեան է ենթարկւած աշխատաւոր ժողովուրդը, իսկ շնորհներ են վայելում ճերմակ ոսկրի ու սև խղճի տէր մարդիկ։

Այդ տեսակ պետական տնտեսութիւնից ու ֆինանսական քաղաքականութիւնից օգտակար ոչինչ չի դուրս գայ։ Մեր պետական ծախքերը աճում են տարեց-տարի։ Այդ ծախքերի համապատասխան պէտք է, իհարկէ, աճի և գանձարանի մուտքը։ Այդպէս, ներկայ տարւում աղքատնակութիւնը ինչպէս արդէն ասացի, պարտաւոր է գանձարան մտցնել երկու ու կէս միլիարդ ռուբլի։ Եւ իհարկէ, նա կը մտցնի այս կամ այն եղանակով։ Բայց մի՛ մոռացէք, որ մեր ծախքերի աճումը վկայում է ոչ թէ ժողովրդական բարօրութեան աճման մասին, այլ ժողովրդի աւերման մասին։ Իւրաքանչիւր մի աւելորդ ռուբլի, որ մտնում է գանձարան, բերում է իր հետ նոր տանջանքներ, նոր թշուառութիւն։ Այդ ռուբլին շորթւում է խեղճից, չքաւորից։ Նա վաստակւում է անհնարին գնով—սովի, ցրտի, հիւանդութիւնների, վաղաժամ մահւան գնով...

*

Պետական տնտեսութեան վարումը մի մասն է այն

բարդ աշխատանքի, որ կատարում է ուսուցիչը կառավարութիւնը և այդ մասը գտնուում է կատարեալ համաձայնութեան մէջ բովանդակ աշխատանքի հետ: Գէպի ուր մղուում է բոլորն իր աշխատանքը, դէպի այնտեղ թեքուում է և նրա մասը—խիստ կարևոր մասը, որովհետև առանց նրան՝ կառավարական մեխանիզմը միևնոյն է թէ՛ շոգեմեքենան առանց վառելիքի:

Պետական գանձարանի եկամուտները հաւաքուում են նրանցից, ումից որ աւելի ձեռնտու է կառավարութեանը: Եւ այդ գանձարանի ծախքերը գործադրուում են այնպիսի ձեռնարկների համար, որոնք շահաւէտ են դարձեալ կառավարութեանը: Ուստի և պետական տնտեսութիւնը—Ֆիւնանսական քաղաքականութիւնը—արտացոլում է իր մէջ, որպէս հայեցողութիւն կառավարութեան բոլոր գործերի, նրա ընդհանուր քաղաքականութիւնը: այսինքն ջոյց է տալիս, թէ ինչ նպատակի է ձգտում նա:

Ուր է մղում, յիշուի այդ կառավարութիւնը ի՞նչ է նրա նպատակը:

Կա ձգտում է ամրացնել իր իշխանութիւնը: Կպատակը պարզ է—կառավարել ժողովուրդը ինքնակամ ու անկոտորոյ յաւիտեանս յաւիտենից:

Իհարկէ, կառավարութիւնը իր այդ ցանկութիւնների մասին ուղիղ ու պարզ կերպով չի խօսում: Ամօթխածութեամբ նա վարագործում է այդ ցանկութիւնները «գեղեցիկ ձառերով»՝ «պետութեան կարիքները» մասին, «հայրենասիրութեան», «ժողովրդի մեծութեան» և այլն: Բայց դժար չէ հասկանալ այդ տեսակ ձառերի իսկական միտքը՝ «պետական կարիքները» այդ ձառերի մէջ նշանակում են չինովնիկների, պոմեշչիկների ու արդիւնաբերողների կարիքները: «հայրենիքի սէրը» նմանեցրուում է այն սէրին, որ տածուում է կամ պիտի տածուի դէպի գաւառապետը: Իսկ «ժողովրդի մեծութիւնը» պէտք է հասկանալ գեներալ-նահանգապետ Առաքարի, պոմեշչիկ Բոբրինսկու և վաճառական Մորոզովի մեծութիւնը: Պահպանել անդորրութիւնը և աճեցնել բարօրութիւնը այդ «սրբազան երրեակ դաշնակցութեան»—այդ է ուսաց կառավարութեան ճշմարիտ նպատակը: Ուրիշ ձգտում նա երբէք չի ունեցել, չունի և այժմ:

Եւ մեր ամբողջ պետական տնտեսութիւնը ծառայել է ու այսօր էլ ծառայում է այդ նպատակին: Գրա իրագործման համար է, որ նետել են աշխատաւոր ժողովրդի ուսերի վրայ ուղղակի ու անուղղակի հարկերի ամբողջ բեռը: Գրա համար է գլխաւորապէս, որ պահպանուում է բազմամիլիոն գործը: Գրա համար է, որ հովանաւորում են արդիւնաբերողներն ու խոշոր կալածատերերը կառուցում են երկաթուղիներ, սահմանում է բարձր մաքս՝ դրսից ներմուծուող ապրանքների համար, որոնք առաջնական անհրաժեշտութիւն ունին, ապա նաև մրցանակներ ու ահաբիւն նպաստներ են տրուում շաքարի, նաւթի և բազմատեսակ հանքերի արդիւնաբերողներին: Կոյն նպատակի համար է, որ կերակրուում է ոստիկանների, ժանդարմների, լրտեսների ամբողջ բանակը: նրա համար են շինուում բանտերն ու կախաղանները կազմակերպում են «պատժական վաշտերը» և հիմնում ղինւորական-դաշտային դատարանները, նրա համար է, միմիայն նրա համար՝ որ սահմանում է Չ ու կէս միլիարդի տարեկան

բիւջէի և պարտք է առնուում օտար պետութիւններից ու բանկիրներից—իննը միլիարդ ռուբլի...

Հարկ կա՞յ արդեօք ասելու, որ վաղուց ժամանակ է վերջ դնել այդ խենդութեան, որ տանում է մեր երկիրը դէպի բայբայում ու սնանկութիւն բոլոր կողմերից:

Բայց ի՞նչ անել:

Անել պէտք է շատ բան: Եւ այդ «շատ բաների» մէջ ոչ-վերջին տեղերից մէկը բռնում են այն բարենորոգումները, որոնք վերաբերում են պետական տնտեսութեան: Պէտք է արմատից փոփոխել այն հիմունքները, որոնց վրայ կանգնած է այսօր այդ տնտեսութիւնը: Եւ նոր ֆինանսական կազմակերպութեան իբրև հիմք պէտք է դնել հետեւեալ կանոնը:

Պետութեան կարիքները—գաւառաւոր ժողովրդի կարիքներն են: Պետութեան շահերը—աշխատաւոր դասակարգերի շահերն են: Պետութեան բարօրութիւնը—նրա ամբողջ ազգաբնակչութեան բարօրութիւնն է: Ապա ուրեմն, պետական տնտեսութիւնը պէտք է կառավարուի յօդուտ ամբողջ ժողովրդի և ոչ հասարակութեան իշխույ Տրամայող դասակարգերի:

Այդ կանոնը կարող է գէթ մասամբ իրագործել միայն այն ժամանակ, երբ նոր ընտրովի իշխանութիւնը կը մտնէ մեր կեանքում հետեւեալ նորմուծութիւնները.

- 1) վերացնել տուրքերը (ակցիզ մաքս) առաջնակարգ անհրաժեշտութիւն ունեցող առարկաներից:
- 2) Սահմանել պրօգրէսիվ տուրք եկամուտների ու ժառանգութիւնների վրայ:
- 3) Սահմանել տուրքեր պերճանքի առարկաների վրայ: Գրանք, եթէ լաւ էք յիշում այն պահանջներն են ֆինանսական քաղաքականութեան վերաբերեալ, որոնք արձանագրած են մեր նազագոյն ծրագրի մէջ: Սակայն ահա թէ բանը ինչու՞ն է: Պետական տնտեսութեան մէջ, ինչպէս առհասարակ ամեն մի տնտեսութեան մէջ, կայ երկու հանգամանք—եկամուտներ ու ծախքեր: Թէ որտեղից պիտի հաւաքին եկամուտները—ես արդէն ասացի: Իսկ այժմ՝ կ'աւելացնեմ երկու խօսք: այն մասին, թէ համաձայն ի՞նչ սկզբունքի պիտի կատարին պետական ծախքերը:

Պետական գանձարանը ժողովրդական գանձարան է: Ուստի կառավարութիւնը չի կարող նայել նրա վրայ, իբրև իր սեփականութեան վրայ և չի կարող ծախսել նրան սեփական հայեցողութեամբ, ծախսել ինչի վրայ կուզէ և ինչպէ՞ս կուզէ, ոչ դի հաշիւ չը տալով իր գործողութիւնների մասին:

Տէրը հէնց նրա համար էլ տէր է, որ իրաւունք ունի ուղած ժամանակ իր մօտ կանչել կառավարչին կամ գործակատարին և հարցնել. «Ի՞նչ եկամուտներ են սպասուում այս տարի, որտեղից պէտք է վերցնել նրանց և ինչի՞ վրայ պիտի ծախսուին»: Տէրը պետութեան մէջ—գա ինքը ժողովուրդն է կամ նրա հաւատարմատարները, ընտրեալները: Տիրոջ (ժողովրդի) գործակատարներն են մինիստրները, Հետեւապէս, դրանց էլ պէտք է պատասխանատուութեան կոչել ֆինանսական հարցերում: Միմիայն այնտեղ, ուր պետական տնտեսու-

Թեան «ելեւստից գիրքը» գտնուում է ժողովրդի ճշմարիտ ընտրեալների անօրինութեան տակ—այնտեղ միայն հնարաւոր է այդ ժողովրդի բարգաւաճումը: Այս մէկը պէտք է լաւ յիշել...

*

Այստեղ ես կը փորձեմ բացատրել, թէ ինչո՞ւ մեր կուսակցութիւնը բացասական գիրք է բռնուած դէպի անուղղակի տուրքերը, իսկ յարձր դ նամակում արդէն կը խօսենք պրօգրէստիվ տուրքի մասին: որ պիտի արւելեկամուաների, Ժառանգութիւնների ու պերճանքի առարկաների վրայ:

Պետական գանձարանը ինչպէս և «ցարին դրամարկը» լցում է այն հարկերով կամ տուրքերով որ վերջապէս է ազգաբնակչութիւնը: Այդ տուրքերը երկու տեսակ են, ուղղակի և անուղղակի:

Երբ դիցուք, գիւղացին ամեն տարի գանձարան է մտցնում 8—12 բուբլի իր ունեցած հողի համար—դա ուղղակի տուրք է: Իսկ երբ նա մի վերջո գինու համար վճարում է գինեվաճառին ամբողջ 7 ր. 60 կոպ. փոխանակ 1 ր. 60 կոպէկի (որ շուկայի գինն է)—այդ աւելորդ 6 բուբլին, որ ակցիզի անւան տակ գնում է պետական գանձարան, արդէն կոչւում է անուղղակի տուրք:

Հատ յաճախ է այդպիսի «աւելորդներ» վճարում գիւղացին կամ քաղաքացին նաև ուրիշ ապրանքների վրայ, որոնք ապրուստի ամենատարրական, ամենամահարժեշտ միջոցներն են. օրինակ՝ նաւթի, լուցկիի, շաքարի, ապա և ծխախոտի, չիթի, մահուղի ևայլն: Աստուծանք գանձարան է մտցնում բոլոր այդ տեսակ ապրանքների համար՝ կամ ակցիզի, կամ մաքս և ապա այդ տուրքերը նա բարձուած է փոքրիկ չափերով իր գնողներին վրայ.—այդտեղից և անունը՝ «անուղղակի տուրք»:

Անուղղակի տուրքերը հարկային սիրւած ձևն են պետութեան համար: Օրինակ, ուսն կառավարութիւնը հաշուել է, որ ներկայ տարուած նա եկամուտ պիտի ունենայ աւելի քան 2 միլիարդ: Բայց իմացէք, որ այդ հսկայական գումարի մեծագոյն մասը կազմում են անուղղակի տուրքերը: Երբ երկրում իւրաքանչիւր մարդու վրայ միջին թւով ամենապէմօկրատիկ հաշուով, այսինքն առանց խտրութեան դասակարգի, գոյքի սեռի ու նոյնիսկ հասակի—իւրաքանչիւրի վրայ ընկնում է այսօր տարեկան 8 բուբլի անուղղակի տուրք: Ի՞նչ մեծ փող է 8 բուբլին, կ'ասէք դուք: Բայց վերցրէք թէկուզ միջին գիւղացիական մի ընտանիք, բաղկացած 5—6 հոգուց և դուք կ'ունենաք 40-48 բուբլի ծախք... Ո՞րտեղից գաննն այդքան փող այն թշուառները, որոնք աշխատում են առանց մէջքները շակելու և այնուամենայնիւ հաղիւհաղ են շնչում և կամ ուղղակի մեռնում են սովից...

Գուք հարց կը տաք. ինչո՞ւ այդպէս կառավարութիւնը մի առանձին հակումն ունի դէպի անուղղակի տուրքերը: Պատճառները շատ են: Ես ցոյց կը տամ միայն երկու կարեւորագոյնները:

Նախ: Կառավարութեան համար շատ կարեւոր է ունենալ ըստ կարելւոյն մեծ թւով վճարողներ: Որքան շատ լինին նրանք—այնքան շատ կը լինի և եկամուտը: Եթէ նշանակես

ուղղակի տուրք—բիչ կը գտնւին վճարել կամեցողներ, մանաւանդ եթէ ժողովուրդը աղքատացել է: Ուրիշ բան է ուղղակի տուրքերի դէպքում, որոնք դրւում են առանցին անհրաժեշտութեան ապրանքների վրայ: Ամեն մէկին հարկաւոր են այդ ապրանքները (նաւթ, շաքար, լուցկի ևայլն) ամեն մէկը պէտք է կամայ-ակամայ կաշից դուրս գայ և գնէ գէթ փոքր քանակութեամբ այդ առարկաներից, իսկ երբ նա գնում է նրանցից, դրանով իսկ տուրք է մտցնում պետական գանձարանը յիշեալ առարկաների համար: Ահանքի փորձը ցոյց է տւել, որ ուղղակի հարկ չը վճարողները մ'նում են այնուամենայնիւ անուղղակի հարկ վճարողներ: Գիւղացին պատած պարտքերի ցանցով, այնուամենայնիւ գնում է այն ապրանքները, որոնց վրայ դրւած է ակցիզ կամ մաքս. գնում է, որովհետեւ դրանք ամենաանհրաժեշտ ապրանքներն են...

Երկրորդ: Կառավարութեան համար կարեւոր է այն, որ ժողովուրդը ապրէ նրա հետ խաղաղութեան մէջ, որ նա չը տրտնջայ «ուժերից վեր» տուրքերի աւթիւ: Իսկ այդ ցանկութիւնը աւելի աջողութեամբ կատարւում է անուղղակի տուրքերի սխտեմի մէջ, քան ուղղակի: Ժողովրդից տուրքեր հաւաքելը—ջանջով գործ է, մանաւանդ երբ ժողովրդական անտեսութիւնը հաղիւ է շունչ քաշում: Հարկաւոր է լինում մեծ մասամբ դուրս գլխը դռով ու սպառնալիքով: Այլ բան է անուղղակի տուրքը: Գիւղացին կամ քաղաքացին վճարում է այն ինքնաբերաբար յօժարակամ, մինչև իսկ չը նկատելով որ իր կոպէկներով հարստացնում է պետական գանձարանը և ցարի քսակը վճարում է և բնաւ մտքովն էլ չի անցնում տրտնջալու իշխանութեան վրայ: Նա միայն կ'ասէ. «Ո՛հ ծանր է դառնում կեանքը, ահա շաքարը նորից թանգացաւ, իսկ թէյին ու նաւթին մօտենալ էլ չի լինի»: Բնաւ չի մտածում, որ այդ ապրանքների գինը բարձրանում է հէնց իշխանութեան կամքով, որը աւելի է մեծացրել նրանց վրայ դրւած տուրքը:

Պարզ է, ուրեմն, թէ ինչու մեր կառավարութիւնը այնքան սիրում է անուղղակի տուրքերի սխտեմը: Այդտուրքերը հանդիսանում են, իբրև յուսալի և համեմատաբար դիւրին աղբւր պետական եկամուտների, շատ աւելի դիւրին և յուսալի քան ուղղակի տուրքերը...

*

Դեռ Աբամ Սմիտը—անգլիացի անտեսագէտ—պընդում էր, որ ազգաբնակչութիւնից հարկ հաւաքելու ժամանակ պէտք է յարգել որոշ կանոններ, առանց որոնց՝ պետական գանձարանի համար հաւաքւող տուրքերը կարող են խիստ ծանրաբեռնել ժողովրդին և տանել նրան դէպի աւերում:

- Ահա անիկ այդ կանոնները.
- 1) Իւրաքանչիւր քաղաքացի պէտք է վճարէ պետական կարիքների համար, համաձայն իր ունեցածի:
 - 2) Հարկերը պէտք է հաւաքւին այնպիսի մի ժամանակ, որը ամենից աւելի յարմար է վճարողի համար:
 - 3) Հարկերը պէտք է հաւաքւին այնպիսի մի ձևով, որ վճարողը չը ծախսէ աւելի քան այն գումարը, որը անմիջապէս գնում է պետութեան կարիքները՝ ու գոհացնում տարու:

Հարց ենք տալիս: Յարգւում ե՞ն մեզ մօտ այդ կանոնները: Ոչ, և ոչ մէկը նրանցից չի յարգւում: Ինչո՞ւ: Որովհետև անուղղակի հարկերի սխտէմի մէջ յարգել այդ կանոնները անհնարին է: Գատեցէք ինքներդ:

Անուղղակի տուրք վճարումէ ամեն մէկը, որ գնում է ակցիոյով ու մաքսով ծանրաբեռնւած: ապրանքներ, այսինքն ընդհանուր անհրաժեշտ դործածութեան առարկաներ, և վճարում է, իհարկէ, ոչ «իր կարողութեան համեմատ», այլ նայած թէ առարկաները ի՞նչ քանակով է նա գործածում: Արտո՞ղ ենք սակայն ասել, թէ այն մարդը, որ տարեկան 10,000 ռուբլի եկամուտ ունի, հարկւր անգամ աւելի է թէ, շաքար, նաւթ լուցկի ու մահուկ գործածում, քան այն մարդը, որ ունի տարեկան միայն 100 ռուբլի եկամուտ: Իհարկէ ոչ, ասել մի այդպիսի քան, նշանակում է ամենամեծ յիմարութիւն գործել: Աւելի ճիշտ կը լինէր ասել, որ ահագին մեծամասնութիւնը վճարում է պետ. գանձարանին անուղղակի տուրքերի մօտաւորապէս նոյն (հաւասար) տարեկան գումարը: Իսկ քանի որ այդ մեծամասնութիւնը—ամբողջ տասնեակ միլիոններ—կազմած է ոչ հարուստներից, որոնք ստանում են հազարներով եկամուտ, այլ չքաւորներից, որոնք տարեկան վաստակում են 150—300 ռուբլի—ուրեմն դուրս է գալիս, որ անուղղակի հարկերը բնաւ չեն վճարւում: «Ըստ կարողութեան», այլ նրանք ընկնում են իրենց ամբողջ ծանրութեամբ ազդաբնակութեան ամենաթշուառ մասի վրայ...

Անիրագործելի է անուղղակի տուրքերի սխտէմում: և այն կանոնը, որը պահանջում է հաւաքել տուրքերը այն ժամանակ երբ դա յարմար է վճարողներին: Արդարև:

Եթէ մարդ ծայրայեղ կարիք ունի մահուկի կամ նաւթի նա իհարկէ կերթայ և կը գնէ: Քիչ հող ունենալով նա իհարկէ կ'ուզէր և՛ մահուկի և նաւթի համար վճարել որքան կարելի է քիչ գոնէ շօ կայի գնի համեմատ Բայց գնորդի այդ օրինաւոր ցանկութիւնը անիրագործելի է մնում: Տարով ծախողին փող մահուկի և նաւթի համար՝ նա այդտեղ իսկ հարկադրւած է վճարել և տուրք այդ ապրանքների համար, այն տուրքը որ աւելացրւած է նրանց շուկայական գինը: Այդ է անուղղակի հարկի էութիւնը. ուղեւոր սեւեռնակ է պէտք է վճարեւայդ հարկը, որովհետև և եթէ չը վճարեւ, չեւ էլ ստանայ քեզ պէտք եղած ապրանքը...

Անուղղակի հարկերը չեն ենթարկւում ' և չեն էլ կարող ենթարկւել այն կանոնին, որ պտում է, թէ հասարակութեան անգամը (գիւղացի թէ քաղաքացի) չը պէտք է վճարէ մի աւելորդ քան, բացի սահմանւած հարկից: Այդ միտքը կարելի է ամենից լաւ պարզաբանել մի մասնաւոր օրինակի վրայ:

Հասարակ թէյի մի փութը 2ինաստանում կարելի է առնել 12 ռուբլով: Աւելացնենք դրան ծանապարհածախքը (1 ռուբ. փութի համար) և վաճառականական շահը (25 տոկոս)—այդ կանէ 16 ռուբլի (մի փութի արժէքը): Բայց մեզ մօտ այդ տեսակ թէյի համար վճարւում է մաքս—փութին 16 ռուբլի: Այստեղից հետևում է, որ Ռուսաստանում մենք պէտք է գնէինք այդ թէյը 32 ռուբլով, փութը: Այո, «պէտք է այդ պէս գնէինք»... Սակայն իրօք մենք գնում ենք նոյն թէյը ոչ թէ 32, այլ 36 ռուբլով փութը: Եւ ահա թէինչպէս է գոյանում:

այդ աւելորդ 4 ռուբլի (իւրաքանչիւր փութին համար): Մաքստանում վաճառականը վճարում է իր գրպանից 16 ռուբլի մաքս Բայց չէ որ այդ մաքսը պիտի վճարէ ոչ թէ վաճառականը, այլ գնողը: Միայն նա է, որ պիտի մտցնէ այդ տուրքը մաս առ մաս, ժամանակ առ ժամանակ, ամեն անգամ, երբ թէյ պիտի գնէ: Իսկ վաճառականը այդ տուրքը մոցնում է նախօրօք, միանգամից ու ամբողջապէս պետական գանձարանը գնողի փոխարէն: Բայց նա մոցնում է, ի հարկէ, ոչ ձրիաբար, նա այդ «ծառայութեան» համար պէտք է ստանայ տոկոսներ: Նա տրամաբանում է այսպէս. «մաքս վճարեցի 16 ռուբլի, եթէ այդ 16 ռուբլին գործի մէջ գնէի, կը ստանայի 4 ռուբլի օգուտ (շահ), հաշուելով 25 տոկոսով: Այժմ տուրով այդ փողը գնողի փոխարէն գանձարանին, եւ պէտք է հէնց այդ գնողից էլ գանձեմ իմ 4 ռուբլի շահը: Իսկ գանձելը դժուար չէ: հարկաւոր է միայն թէյի գնին աւելացնել այդ 4 ռուբլին»: Վաճառականի համար միանգամայն ճիշտ դատողութիւն: Ասածը արւած է: Թէյը կը ծախուի արդէն ոչ 32, այլ 36 ռուբլի փութը: Այդպէս է անուղղակի տուրքի յատկութիւնը. նրա անունով գիւղացին ու քաղաքացին թախանում են կրկնապատիկ թախանում է նրանց պետական գանձարանը և թախանում է վաճառականը...

Այդպէս ուրեմն, մենք իմացանք, որ անուղղակի հարկերը դրւած առաջնակարգ անհրաժեշտութիւն ունեցող ապրանքների վրայ ըստ ամենայնի անարդար են:

Նրանք իրենց բոլոր ծանրութեամբ ճնշում են աշխատաւոր ու չքաւոր ժողովուրդին և շատ թոյլ են զարնում հարուստների գրպաններին:


Մարդիկ վճարում են նրանց կարծես հարկադրւած, ամեն անգամ երբ գնում են անհրաժեշտ ապրանքներ և ոչ այն ժամանակ երբ այդ յարմար է իրեն, գնողին:

Նրանք վերջապէս, գանձարան մոցրւում են այնպիսի մի ձևով, որ գնող ու սպառող քաղաքացիները հարկադրւած են լինում վճարել նրանց համար որոշ տոկոս վաճառականին:

Այդ բոլորը միասին առած՝ ցոյց է տալիս, որ հարկաւոր է արմատից ոչնչացնել այն տուրքերը, որոնք դրւած են առաջնակարգ անհրաժեշտութիւն ունեցող ապրանքների վրայ: Այլապէս ժողովրդական թշուառութիւններին երբէք վերջ չի լինի...

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն



Զօհը Ղարմի նամերտ դաւաճանութեան: Սոյդօն, Տարնի Ալվարինձ գիւղէն էր, 33 տարեկան 1894-ին, դեռ գիւղական պարզուկ կեանքին մէջ մեծցած, յեղափոխական սերը արթնցաւ անոր մէջ: Ճարպիկ էր և կուսակցի, իր ունեցած բոլոր սպառազինութիւնն է մէկ չախմակի հրացան և մէկ տապար: Երբ քրդեր կուգային գեղի ոչխարը կամ տաւարը յափշտակելու, Սոյդօն կը վազէր ետևէն և կը խլէր աւարը: Գիւղացիք գեղին պահպան կարգեցին զայն իր քաջութեանը համար:



Սայրօն լսած էր Ֆէրայիներու մասին: Փնտուեց գտաւ Անդրանիկը և Գէորգ Չափուշը, և ընկերական կապ հաստատեց անոնց հետ, և յեղափոխական սրտոտ կազմակերպող մը եղաւ և Ֆէրայիներուն ներքեւով իր ծառայութիւնը:

Այդ միջոցներուն յայտնի արիւնարբու աւազակ քիւրդ Իւսուֆ, քանի-քանի խեղճ հայ երկրագործներ, ինչպէս նաև ս. Աղբերիկ վանքի վանահայր Ղազար վարդապետը սպաննած էր: Սայրօն միտքը դրաւ վրէժ լուծել Իւսուֆէն և ետևէն ինկաւ: Գիշեր մը կը հանդիպի այդ հրեշին, և անոր ընկեր ֆլիտին: Սայրօն և իր անբաժան ընկեր Վարդան արդար վրէժով արիւնհիրակ, կը յարձակին և կը սպաննեն Իւսուֆը, ֆլիտ կը յաջողի փախչի: Սայրօն՝ կը հասնի ետևէն և տապարի հարւածով կը գործէ ձորակի մը մէջ: Արիժառուները անգրիի աշխարհը զրկած կարծելով զայն կը հեռանան: Քիչ վերջը քիւրդը իր առած վերքէն ուշքի գալով կերթայ կառավարութեան կը պատմէ դէպքը: Սայրօն փախաւ լեռը ելաւ:

Այլ պէյ 50 ոստիկանով սկսաւ հետապնդել փախտակաւոր բայց նա անըմբռնելի էր: Կառավարութիւնը պահապան դրած էր անոր գեղի շուրջը որ հսկեն անոր ելածուղը: Գիշեր մը Սայրօն, ըստ սովորականին, գեղ եկաւ պաշար առնելու և մտաւ տուն մը, պահապանները շուտով լուր տւին ոստիկաններուն, որոնք իսկոյն եկան պաշարեցին՝ տղոց գրտնւած տունը: Կռիւր կատարի եղաւ: Ոստիկանները ուզեցին տունը վառել: Ընկերները տանը ետևի պատը ծակելով կուզէին փախչիլ, Սայրօն մինակ նահապետական չախմակին ափին դռնէն դուրս նետուեցաւ՝ սպաննեց թիւրք խաղիմը և երկու քիւրդ, և անյայտացաւ մութին մէջ: Ոստիկանները ճարահատ և կատաղած, ստիպեցին գեղի ըէսը որ Սայրօն և ընկերները իրենց յանձնէ: Սայրօն մերժեց անձնատուրը և լայլ յայտարարելով որ ինք պատրաստ է իր արիւնին մինչև յետին կաթիլը թափել մեծ գաղափարին համար:

Ոստիկանները կատաղած որ չեն կրնար ձեռք ձգել Սայրօն սպաննեցին ըէսը: Երկու ամիս ետև Սայրօն անցաւ Սասուն իր ընկերներուն քով և իր անձնակրութիւնով բոլորին սերն ու համակրութիւնը գրաւեց:

Սայրօն մասնակից էր 1900-ի ս. Առաքելաց վանքի կռիւն, Գէորգ Չափուշի հետ Նորշէն գեղի կռիւն, և այսպէս շարք մը կռիւններու, մինչև Սասունի մեծ կռիւնները, ուրիշ յետոյ Գաշտ իջնելով՝ իր ընկերներու հետ Միրազովի, Շամիրամի և Աթամարի կռիւնները մղեց:

Վասպուրականի ճամբով անցաւ Կովկաս, ուր հայթաթարական արիւնահեղ կռիւններու միջոցին, Շարուրի շրջանին խմբապետ նշանակուելով, սարսափ ձգեց թշնամիներուն վրայ: Կռիւնները վերջացած էին, Սայրօն, մէկ քանի ընկերներով վերադարձաւ իր պաշտած հաւատքի և յոյսի վայրը ուր ինկած էին, կըսէր, «Սերոբներ, Հրայրներ, Գուրգէններ և Վահաններ»:

Երկիր մանելով Գէորգ Չափուշին գործակից եղաւ, եռանդուն կերպով մասնակցեցաւ Սուլայի վերջի կռիւն ուր ձեռքէն վիրաւորուեցաւ: Անմասն Չափուշի մահէն յետոյ, Սայրօն մտաւ ժողովուրդին մէջ և իր ինկած կտորձ ընկերներու հաւատամբը քարոզեց անոնց, մինչև ու քիւրդ պէկի դաւաճանութիւնը եկաւ սղբերգօրէն վերջ տալու քաջի կեանքին:

Սայրօն կը թողու երկու զաւակ: Իր ընկերները յարգանքով պիտի պահեն անոր օրինակի յիշատակը և անոր գերեզմանին վրայ կ'ուխտեն բարձր պահել Ֆէրայիի պատիւը, որուն բոլորանէր ներկայացուցիչը եղաւ Սայրօն:

Զ Ն Դ Օ Յ

Զնդօն մէկն էր այն շարքաւ և անձնուրաց Ֆէրայիներէն, որ երկու ընկերներու հետ զոհ գնաց վերջերս, քիւրդ ցեղապետ Ղասըմ բէկի անարդ դաւաճանութեան:

Զնդօն՝ Տարօնի Յարգօնը գիւղէն էր, 30 տարեկան: Այն ժամանակները երբ Սերոբ-Աղբեր, Գուրգէն ման կուղային Սասուն և խլաթ դաւառուները, Զնդօն, որ միշտ զէնք և աղաւ կեանք կերակրէր, դիմեց անոնց որոնք իր ճարպիկութեանը համար ընդունեցին իբր ընկեր և սուրճանդակ: Զնդօն իր սուրճանդակի պաշտօնը կը կատարէր հիանալիօրէն: Կառավարութիւնը հետապնդեց Զնդօն, պաշարեց անոր տունը, և կրցաւ ձերբակալել միայն անոր եղբայրը Պօրոս:

Այդ ատեն Աղբեր իր ընկերներով հեռացեր էին այդ շրջանէն, Զնդօն ճարահատ, քիւրդ աղայի մը յետ ապաստան գտաւ: Երբ Սերոբ ուշ ատեն վերադարձաւ, հաւատարիմ Զնդօն՝ վազեց և իր նախկին պաշտօնը վերստանանեց վարդենիսցի Մուրատին հետ, որ 1905-ին նահատակուեցաւ Արքայմանք գիւղին մէջ:

Զնդօն՝ 1903-ին մասնակցեցաւ Յունան գիւղի կռիւն, և բախտեալով կուռեցաւ:

Սասունի կռիւ նախօրերուն Հրայրի և Վահանի որոշմամբ զրկուեցաւ խլաթ ռազմավորութեան փոխադրելու, բայց մինչև վերադարձը Սասունը պաշարուած էր արդէն, ուստի Գաշտ անցաւ կռիւր հոն շարունակելու: Բերդակ գիւղի մէջ էր Զնդօն իր ընկերներով երբ զօրքերը եկան բռնելու զինքը: Զնդօն 6 ժամ կատարի կռիւ մղեց և ահագին վնասներ տալէ յետոյ թշնամուն՝ ազատեցաւ: Երբ Սասունի ընկերները Մշոյ Գաշտ իջան միացաւ անոնց և մասնակցեցաւ Մըկրազովի, Կուրավաւի, Գոմերու և Գոմս գիւղերու կռիւններուն: Զնդօն՝ իբր փորձ գալլ մը՝ որ գիտէ երկրին ծակուծուկը, խուժքը առաջնորդեց մինչև խլաթ դաւաւ, մասնակցեցաւ Շամիրամ գիւղի և Աթամարի կռիւններուն:

Վասպուրականէն՝ Պարսկաստանի վրայով անցաւ Կովկաս: Հայ-թաթարական ընդհարումներու միջոցին հայի արիւնք եւ եկաւ և նետուեցաւ կուրի տաք շարքերուն մէջ, Գանձակ և Շուշի:

Սակայն մայրենի երկրին հողն ու ջուրը անդիմադրելիօրէն կը քաշէին ջնդօն, անհամբեր էր թուշիլ նորէն հոն և մեռնիլ անոր արիւնտ նւիրականութեան գիրկը:

Արտասահմանի մէջ քիչ շատ զինավարժութիւնը կատարելագործելէ յետոյ, 1907-ին մտաւ երկիր, հաւատքի կործած առաքեալը բայց քրդական դաւաճանութիւնը շատ շուտ կարեց անոր թափակալին կեանքի թելը:

Ջնդօն՝ իր բազմամեայ տիպար և եռանդուն գործունէութիւնով, մաքուր յիշատակը կը ձգէ բոլոր ընկերներու սրտին մէջ, որոնք կողբան արի և հաւատարիմ զինուորին վաղահաս և դաժան մահը:

Գ Ր Ի Գ ՈՐ Ի Յ Գ Ե Ր Շ ՈՒ Ն Ի

Սօցիալ-յեղափոխականների, ոգով և աշխատանքով մեր ընկերների, կուսակցութիւնը կրկին մի ծանր, անչափ ծանր կորուստ ունեցաւ, մեռաւ այդ կուսակցութեան ամենատաղանդաւոր և ամենաեռանդուն ղեկավարներից մէկը՝ Գ ր Ի Գ ո Ր Ի Կ ե Ր շ Ո Ւ Ն Ի ն: Գարձեալ մի անգամ արգարացան բանաստեղծի մարգարէական խօսքերը.—

«Բախտաւորի թշնամին է մեռնում,
Գժբախտի բարեկամն է մեռնում»:

Տանձած և տառապեալ Ռուսաստանը դուրսէ սյժմ աւելի քան երբէք կարիք ունի Գերշունիի նման մարդկանց, որովհետեւ միայն այդ պի սի մարդիկ ունենալով հնարաւոր է յաղթահարել մտայլ և սուր ընկալիցայի հիգրան, որ պատրաստ է խեղդելու ամեն մի կենսընդունակ և կենսագործ բան: Բայց անորք ճակատագիրը ըստ երևոյթին վճռել է հովանաւորել ուսու ժողովուրդի դեռեւս «բախտաւոր» թշնամիներին, և նրանցից խլեց նրա բարեկամներից դարձեալ մինին, որ նրան անպայման նւիրած էր...

Սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան առաջին կորհրդակցութիւնում նրա թեօրիական ղեկավարներից մէկը հետեւեալ կերպով բնորոշեց Գերշունիին, որ այն ժամանակ նստած էր Շխտէլբուրգի ամրոցում: «Մա—սայն նա—այն մարդն է, որի անւան հետ սերտ կապւած են մեր կուսակցութեան ծագումը, աճումը և առաջին ամենազգաւոր քայլերը դէպի յաղթանակ: Նա մի մարդ է, որ միացնում է բոց և վառ սիրտը՝ սառը քաղաքական խելքի, հոգու հմայիչ մեղմումը՝ մարտիկի պողպատէ կամքի և քննասէր անհանգիստ միտքը՝ պրակտիկ-կազմակերպիչի գործնական կազմի հետ»:

Սրա մէջ կայ և Գերշունիի անձնւիրութեան բնորոշումը և նրա դերի գնահատութիւնը կուսակցութեան մէջ: Գուցէ միայն մի բան է մուտքեւած, որ՝ այդ մարդու բոանտիկ-գեղեցիկ հոգում բորբոքում էր ստեղծիչ սգեւորութեան հուրը, հնչում էին բանաստեղծի և արեւստագետի ձայներ, և որ բոլոր «խելագար քաջերի» նման, նա ստիպւած էր շատ շուտով ձաշակել արհամարեւածների և վիրաւորածների ազատութեան ու բախտաւորութեան համար մղող կուրի բոլոր ծանրութիւնը...

Գեռ ժամանակը չէ եկել տալու Գերշունիի յեղափոխական գործունէութեան մանրամասն նկարագրութիւնը: Բայց ահա այդ գործունէութեան մի քանի ամենատիպիկ և ամենավառ յօդուները:

Ռուսաստանում մարքսիստական գաղափարների ծաղկման շրջանում, այն ժամանակ երբ մարդիկ համարեալ զբոստումնային տարած էին սօցիալ-դեմոկրատիայի դոգմայով և

գործնականով մի փոքր շրջանում միտք է հասունանում՝ ստեղծել մի նոր սօցիալիստական կուսակցութիւն, որ հանդիսանար «Նարոչնայա Վոլեա» կուսակցութեան հոգեւոր շարունակողը և ի հակալիւ սօցիալ-դեմոկրատների միակողմանի ծրագրի և տաքտիկայի, առաջ բերել աւելի կենսունակ աշխարհահայեացք և աւելի յեղափոխական տաքտիկա:

Այս միտքը իրականանում է և Գերշունիին հանդիսանում է նոր կուսակցութեան ստեղծողներից և կազմակերպողներից մէկը: Կուսակցութիւնը ապա դուրս է գալիս ակաւի քաղաքական կուրի, և ամենից առաջ կատարում է մարքսիստական կազմակերպութեան օգնութեամբ մի քանի անուորական ակտեր, և Գերշունիին այդ պատասխանատու աշխատանքի գլուխն էր կանգնած. նա՛ մարմնացած եռանդամբողջապէս անձնատուր է լինում իր յանձն առած միսիային, իրեն նւիրում է ամբողջապէս վտանգաւոր, բայց փառաւոր ձեռնարկներին:

Ապա բախտը առ ժամանակ դաւաճանում է նրան՝ Նըրան ձերբակալում են և շղթայակապ ուղարկում են Պետրօպոլիսի բերդը, այդ դատում են զինւորական դատարանով և դատապարտում մահան, որը սակայն փոխարինում են ցմահ բանտարկութեամբ Շխտէլբուրգի ամրոցում:

Գերշունիի դատավարութիւնը սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան կեանքի փառաւոր էջերից մէկն է, իսկ նրա ճաւր դատարանում, պարզ և արժանապատուութեամբ լեցուն, կարծես բարոյական ուժի լուսով համակած, դա իր համարձակութեամբ և գեղեցիկութեամբ օրինակելի մի խոստովանութիւն է յեղափոխականի բարեւոյնը:

Գատավարութիւնից յետոյ սրւեցին ծանր, տաղտուկ միակերպ, տանջալի օրերը, օրեր Շխտէլբուրգում, որոնք նկարագրւած են հէնց իրենցից՝ Գերշունիից պատկերացման մի հաւաքիւտ քանքարով և ուղղակի գեղարեւստօրէն Այստեղ, «արքայական բանտի» մուսլլ պատերի միջով հասաւ նրան լուրը խոշոր դէպքերի մասին, որ տեղի էին ունեցել ազատութեան մէջ Պլէկէի մահամբ, սրանց յետոյ եկած «դարնան», արդէն պատմական դարձած ընդհանուր գործադուլի, հոկտեմբեր 17-ի մանիֆէստի, Մոսկուայի ապստամբութեան մասին... Եւ նրա հոգին թնդաց՝ լցած ուրախութեամբ, խելագար հրճանքով Ռուսաստանի համար, ընկերների համար, իր թանկագին կուսակցութեան համար, որի յաջողութիւնները ստիպում էին նրան աւելի քան երբէք մտածել նրա կատարելագործման և ամրացման մասին: — «Ուժ մի խնայէք, որքան կարելի է շուտ իրականացնելու Ռուսաստանի մի սօցիալիստական կուսակցութիւն», գրում էր նա Շխտէլբուրգից իր ընկերներին, որ դուրսուրել էին կուսակցական կորհրդակցութիւնի 1906 թւին: — «Ինչքան էլ այդ ուր դժար լինի, աշխատեք մտնալ բոլոր այն ծանր անձուների բաները, որոնք խոշոնք են ընկած միացման ճանապարհին՝ բոլոր անձնական յարաբերութիւնները»: Ներգործեցէք աւելի զգայուն, բարոյապէս մաքուր տարրերի վրայ և յաղթանակը ձերը կը լինի»... Նրա նախնական այս կտորը ամենալաւ ապացոյցն է այն բարձր բարոյական գեղեցիկութեան, որը հանդիսանում է իբր Leitmotiv (ղեկավարող գիծ) Գերշունիի ամբողջ հոգու և ամբողջ վարքի: Չարմանալի չէ, որ մինչև անգամ թշնամիներն էլ չէին կարող չը յարգել Գերշունիին, որ մինչև անգամ մարդիկ, որոնք դրւած էին նրան դատելու և դատապարտելու համար, ակամայ շնջում էին «Ecce homo», «Ահա սա մարդ է, իսկական մարդ...»:

Շխտէլբուրգին հետեւեց Ախտոյսի բանտը նրան յատուկ բոլոր «գեղեցիկութիւններով» դաժանակեր կեանքի:

Բայց ուս յեղափոխութեան «քաջարի երիտասարդը» այլևս անկարող էր երկար նստել առանց գործի: Բնած չէին և ազատութեան մէջ եղած ընկերները: Եւ ահա Գերշունիին ազատ է և Ամերիկայում:

* Սուսի ինարկէ սօցիալիստ-յեղափոխականների և սօցիալ-դեմոկրատների յարաբերութեան մասին է:

Նորից սկսում է նրա համար եռանդուն գործունեութիւնը: Ամերիկայում նա կազմում է մի շարք մտինդներ, հաւաքում է ժողովուրդը հարկեր հազար ֆրանկ կուսակցութեան կարիքների համար անսպասելի կերպով յայտնուում է երկրորդ կուսակցաժողովին, վերցնում է իր վրայ կենտրոնական կոմիտէի անդամի լիազօրութիւններ և կըրկնակի եռանդով սկսում է աշխատանքը կուսակցութեան մէջ անյողդողդ փճուով մնալ մինչև վերջին շունչը «փառաւոր դիրքում»: Բայց միթէ կարող էր Գերշունին այլ կերպ վարել:

Սկսեցին ծանր օրեր: Ռեակցիան ընդարձակ ծաւալ առաւ: Աշխատանք մասնակցները յոգնեցին: Ինտելիգենցիան և երիտասարդութիւնը ջլախնացան: Հէնց կուսակցութեան շարքերում մի տեղ հարւած, մի տեղ կազմալուծում: Ամենալաւ ժամանակն էր աշխատելու, առանց ձեռքերը ծալելու, առանց հանդատանալու, հաւատքով դէպի մի անգամ սկսած գործը, անխուսափելի յաղթանակի յուսով: Եւ Գերշունին սկսեց աշխատել համարեա քսան ժամ օրական. բայց նրա ուժերը, որ խորտակել էին Պետրոպաւլովսկում, Շլիստելբուրգում և Նյաստոլում, չէր դիմացան: Նա մեռաւ: մեռաւ ծաղիկ հաստիւմ մինչև վերջին լուսնի մտածելով և կոտորելով ժողովրդի տանջանքների մասին, կուսակցութեան գործերի մասին, և աշխատանքի ընկերի վիճակի մասին և միայն մահամերձ հալիւցիւնացիաների լուսններին նա մուռնում էր կեանքի պրօզան և խօսում էր ծաղիկների մասին և ծաղիկներ խնդրում... Եւ շնորհակալ յետագայ սերունդները իհարկէ կը շրջապատեն Գերշունիի անունը ծաղիկների անմահ պատկով...

Գերշունին մեռաւ Յիւրիի կանտոնային հիւանդանոցում մարտ 17-ին: Նրա աճիւնը տեղափոխուեց Փարիզ, ուր տեղի ունեցաւ թաղումը մարտի 29: «Գրօշակի» խմբագրութիւնը Գաշնակցութեան կողմից հետևեալ հեռագիրն ուղղեց Փարիզ Ս. Յ. Կովտեհին.—

«Աշտակցում ենք ձեզ մեծ կորուստին յանձին Գերշունիի, ամենականաւոր մարդիկներից մինի, ընդդէմ ցարական բռնակալութեան Ռուսաստանի վերանորոգութեան և սօցիալիզմի յաղթանակի համար: Արտայայտում ենք մեր կենդանի անկեղծ վիշտը Ռուսաստանի սօցիալ-յեզասփոխական կուսակցութեան մեր ընկերների»:

Ի դիմաց Գաշնակցութեան
 «Դ Ր Օ Շ Ա Կ» խմբագրութիւն

Բայց այդ խմբագրութիւնն իր կողմից խնդրեց Պիէր Քիյառին լինել իր ներկայացուցիչը թաղման ազահանդիսին: Թաղմանը մասնակցեցին և պսակ դրին նաև Փարիզի մեր Մարմինը և ընկերները:

Կ Ա Ր Լ Մ Ա Ր Գ Ս

(Մահաւ 25-ամեակի առթիւ)

Քսան ու հինգ տարի սրանից առաջ, մարտի 14-ին դերեզման իջաւ այն նշանաւոր մարդը, որ 1847 թ-ին արձակել էր մարտական կոչը. «պրօլետարներ բոլոր երկրների միացե՛ք» և որ 64-ին եղաւ դիլաւոր հիմնադիրը սօցիալիստական Ինտերնացիօնալի (Միջազգային աշխատանքական միութեան): Կարլ Մարքսը ահագին զարկ տւեց սօցիալիստական մտքի ու հոսանքի առաջադիմութեան, իբրև դիտական և իբրև քարոզիչ—ադիտատու: Նա ստեղծեց, գըլլաւորապէս Գերմանիայում, մի ընդարձակ դպրոց, խիստ ղօզմայական բնաւորութեամբ: Հակառակ նախորդ սօցիալիստներին—Աէն-Սիմօնին, Օլէնին և այլոց, որոնք դիտում էին սօցիալիզմը, իբրև սոսկ մարդասիրութիւն և նրա իրազորումը հնարաւոր էին տեսնում բոլոր դասակարգերի համերաշխ գործակցութեամբ—Մարքսը քարոզեց դա սակարկային կ ու ի և յայտարարեց, որ մարդկութեան

աշխատանքը և տառապող մասը իր սեփական ուժերով միայն կարող է նւաճել իր անտեսական ազատագրութիւնը: Եւ «դասակարգային կռիւը» մինչև օրս էլ սօցիալիստական աշխատանքութեան նշանաբանն է:

Սակայն, քսան ու հինգ տարւայ ընթացքում շատ բան էլ փոխեց: Մարքսի մի շարք ենթադրութիւններն ու մարգարէութիւնները (հարստութիւնների կենտրոնացման, կապիտալիզմի շուտափոխ մակման մասին և այլն)—չարդարացան: Գօզմայական միապաղպղ դպրոցը այժկածեց և հրապարակ եկաւ—մասնաւորապէս Գերմանիայում—բէվիզիօնիստական կամ վերաքննողական հերձաւոր, որ սկսեց մի առ մի քննադատել ու տապալել ուսուցչի բազմաթիւ տեսական դրութիւնները: Ուրիշները, ուղղափառ, հաւատարիմ մարքսիստները, մտցրին շտկումներ ու լրացումներ՝ դօզմայի մէջ: Կատարի հարւածներ հասցրեց կրիտիքական միտքը մասնաւորապէս Կարլ Մարքսի այսպէս անւանւած «կատասարօֆային թէօրիային», որ բղխում էր նրա դաւանած հեզելեան դիալեկտիկայից: Մարքս-հեզելեան դիւնոււմով համաշխարային էւօլիւցիան առաջ է գնում հակադրութիւնների դրութեամբ: Տէր և ըստրուկ, պատրիկ և պլեբէյ, ֆէօդալ և ճորտ, կապիտալիստ և պրօլետար,—դրանք հակադիր երևոյթներ են, որ բնորոշում են հասարակական—քաղաքական այլ և այլ դրութիւնները: Եւ որքան աւելի խոր լինի հակադրութիւնը (դիցուք երկու դասակարգերի մէջ), այնքան ըստ Մարքսի, արագ կը կատարւի թռիչքը, փոխանցումը հասարակական մէկ շրջանից դէպի միւսը: Եւ Մարքս ըստայնմ միանգամայն նպատակայարմար էր գտնում, որ աշխատանքը դասակարգը հետզհետէ աւելի և աւելի աղքատանայ, խրի ծայրայեղ թշուառութեան մէջ, որովհետև այդպիսով կը ստեղծւի խոր հակադրութիւնը, որը իբր թէ կը մղէ պրօլետարիատին դէպի յեղափոխութիւն, դէպի կիզակ ու վճռական «կատասարօֆ» և կիրագործէ սօցիալիզմը: Հեզելի աշակերտը դատում էր միանգամայն տրամաբանօրէն, համաձայն հեզելեան թէօրիայի: Սակայն այդ վերջինը յայտնեց ոչ-համաձայն իրականութեան:

Յետագայ փորձը ցոյց տւեց բարեխաւաքար, որ հակադրութիւնը երկու մեծ դասակարգերի միջև չի խորանում, որ պրօլետարիատը և ամբողջ աշխատանքը ընդհանրութիւնը չի գնում: աստիճանաբար դէպի այն սև, յուսահատ թշուառութեան անգունդը, որ Մարքսին ու իրեն համախոհներին թւում էր ճակատագրական: Աերջապէս, քննադատական միտքը օր ըստ օրէ աւելի և աւելի շեշտեց, որ թշուառութեան, տգիտութեան, մերկ ու կիսաքաղց դոյութեան մէջ հեզելի պրօլետարիատը անընդունակ է կատարելու մի այնպիսի վիժխարի ու պատասխանատու յեղաշրջում, որպիսին է սօցիալիստական կարգերի հաստատումը... Այսպիսով ջուրն ընկաւ Մարքս-հեզելեան դիալեկտիկան, իբրև անկարող կիրաւուելու հասարակական առաջադիմութեան մէջ: Նրա հետ ջուրն ընկաւ Կարլ Մարքսի պատմական թէօրիայի («անտեսական մատերիալիզմ») և «դիտական սօցիալիզմի» պատճառաբանութեան մի շօշափելի մասը: Արդէն նրա ընկերն ու գործակիցը, Ֆրիդրիխ Էնգելս կենսաքի վերջալոյսին, (անցեալ դարի 90-ական թ-երի սկզբներում) ամենախոշոր շտկումը մտցրեց Մարքսիզմի մէջ: Նա խոստովանեց, որ ընկերով և իր ենթադրութիւնները չարդարացան պատմութեան առջև և ազդարարեց, իբրև մի տեսակ վերջին ու հանդիսաւոր դաւանանք, որ նախքան մեծ սօցիալական յեղափոխութիւնը, անհրաժեշտ է շատ երկար ժամանակ խաղաղ ու լեզալ գործունեութիւն, որպէտղի աշխատանքը զանգաւածները կրթին, դաստիարակւին, հասունանան, որպէսղի աճի նրանց նիւթական բարօրութիւնը և դասակարգային, սօցիալիստական դիտակցութիւնը, որպէսղի դաւոյ վճռական լուսնի նրանք կանգնած լինին, իբրև աշխարհը անճառող դասակարգ, իրենց մեծ կոչման բարձրութեան վրայ...

Մինչ այդ տիեզերական վայրկեանը հասնելը, աշխատանք տարրերը, հետևելով մեծ առաքելի ազդարարութեան, կը միանան իւրաքանչիւր երկրում ազգայնօրէն ու միջազգայնօրէն, կը կազմակերպւին ի մի ներդաշնակ, հա-

մաշխարհային բանակ, պարլամենտական, սենդիկատային և այլ գործունէութեան ճանապարհներով կը բարելաւեն իրենց նիւթական վիճակը և կը պատրաստեն յեղափոխական կամ խաղաղ միջոցներով իրենց ձեռքը ձգելու քաղաքական իշխանութիւնը:

1848 թ. ՄԱՐՏԻ 18

1848 թ-ին Եւրոպայի բազմաթիւ յեղափոխութիւնների մէջ ուշագրաւ է իր ծաւալով և արիւնոտ կռիւներով, բարրիկազներով և զոհերով Բեռլինի յեղափոխութիւնը 1848 թ-ի մարտի 18-ին, որի վախճանամեակը տօնեց սօցիալիստական աշխարհը այս տարի:

Գեռ Պրուսիայի Ֆրիդրիխ-Վիլհելմ III թագաւորը ժողովուրդը Ֆրանսիացիների դէմ ոտքի հանելու նպատակով 19-րդ դարասկզբին, սահմանադրութիւն խոտոցաւ նրան. բայց բոլոր բռնակալների պէս, երբ ոտքի տակ հողը ամրացած զգաց, իսկոյն դաւաճանեց, մինչև անգամ որդուն և ժառանգին, Ֆրիդրիխ-Վիլհելմ IV-ին կտակելով՝ ինքնակալ սկզբունքը անխախտ պահպանել: Բայց այդ խոտոցմը չէին մոռացել գերմանական ազատամիտները, որոնք նաև ձգտում էին բաժան-բաժան պետութիւններից մի հզոր միացած Գերմանիա կազմել: Ազատամիտները ուժ չզբաղով հզոր միահեծանութեան դէմ բացարձակ ելնելու, բաւականանում էին միայն լուին բողբոջի իսկ ցենզուրան անհնար էր դարձնում տիրապետող կարգերի քննադատութիւնը:

48 թ-ականը իր շարժումներով և մասնաւորապէս Պարիզի փետրաւարեան յեղափոխութեան յաջող ելքը թափ հաղորդեցին շարժմանը Գերմանիայում, որը սկսւելով հաւաքաբարեմտեան պետութիւններից տարածւեց մինչև Պրուսիա և Աւստրիա: Կառավարութիւններին առաջադրութիւնները մեծ մասամբ սահմանափակուած էին զանազան աղատութիւնների և ներկայացուցչական իրաւունքի պահանջով: Եւ հասկանալի է, որ այս շարժումներին մասնակցում էին բացի բիւրգերներից (քաղաքայիններից) նաև բանւորութիւնը և տեղ-տեղ նաև գիւղացիութիւնը: Կառավարութիւնների անարիւն զիջումը և ազատամիտ մինիստրութիւնների հաստատումը գոհացնում էր բուրժուական տարրերին. գիւղացիներին էլ շատ տեղ յաջողեց յիշատակել ֆէօդալական պարտաւորութիւնները: Իսկ Պրուսիայի բանւորութիւնը, որ արդէն սկսել էր իւրացնել սօցիալիստական վարդապետութիւն, առհասարակ իրեն խաբւած էր զգում, թէև տեղ-տեղ դնում էր և իր ուրոյն պահանջները: Առանտղութիւնը կռոււում էր բանւորութեան հետ, նոյնիսկ բարրիկազների վրայ:

Անարիւն չանցաւ շարժումը Բեռլինում: Ֆրիդրիխ-Վիլհելմ IV-ը, որ շարունակ յետաձգում էր Միացեալ Լանդտագի (խորհրդարանի) հրաւերը, իր ձգձգումներով բանը հասցրեց փողոցային ցույցերի, մինչև որ խոտոցաւ հրաւիրել: Բայց երբ այդ խոտոցմից ոգևորւած ամբոխը մարտի 18-ին հաւաքւած էր պալատական հրապարակը, յանկարծ դուրս եկան զօրքերը, կրակ արին և սկսեցին ցրել նրան խաբւած ժողովուրդը անմիջապէս զէնքի դիմեց, կազմեց բարրիկազներ և սկսեց կռիւ զօրքերի դէմ: մինչև հետևել առևտու, ամեն տեղից զօրքերին մղելով մինչև քաղաքի կենտրոնը: Ֆրեդրիխ-Վիլհելմ IV-ը տեղի տւեց և խոտոցաւ կատարել ժողովրդի կամքը: Ժողովուրդը վերջապէս սպանուածների դիակները դիմեց արքայական պալատը, ստիպեց, որ թագաւորը և թագուհին դուրս գան և տեսնեն զօրքերի անթութեան զոհերին: Ամբոխը պահանջեց որ թագաւորը դիտարկէ հանէ ի յարգանս զոհերի, և աշխարհի սամօդուր բռնակալներից մէկը, որ քիչ առաջ երդւում էր ոչ մի զիջում չանել ժողովրդական պահանջներին և իր ինքնակալութիւնը յաւիտեանս պահել դէտարկն է հանում: Ժողովրդի պահանջով:

Այսպէս եղաւ 1848 մարտի 18-ի յեղափոխութիւնը, որի պատճենները ստեղծուեցին Եւրոպայի տարբեր կողմերում:

առեալ տարին իսկ ուժեղացած ընկալիչան այլևս չուզեց յիշել ժողովրդի իրաւունքների մասին:— Բանը նրանումն է, որ մինչև յեղափոխութիւնը, բիւրգերները և բանւորութիւնը միասին էին գնում: Բիւրգերները իհարկէ ոչինչ չէին չունէին, որ բանւորութեան սուտը մասսան բարրիկազների վրայ կուշելով արիւն տալով կրակից շահանակներ հանէր բիւրգերների համար: Մեր բարի բիւրգերները, որ մարտի 19-ին բանւորների հետ միասին պահանջում էին զօրքերը հեռացնել Բեռլինից, երբ տեսան, որ մարտ 26-ին կայացրած մի ժողովում բանւորները պահանջում են աշխատանքի մինիստրութիւն կազմւած բանւորներից և դործատերերից, նաև աշխատանքի օրւայ կրճատում և այլն, վախեցան և մարտի 27-ին արդէն 14000 ստորագրութեամբ դիմեցին կառավարութեան, ինդիքելով զօրքերը վերադարձնել:

Այս բուրժուական և աշխատաւորական շահերի դիտակցութիւնն էր, որ սրտախի առաջ եկաւ 48 թ-ի յեղափոխութեան ժամանակ և դարձաւ ամենազօրաւոր պատճառներից մէկը սօցիալիստի հետզհետէ թուլանալու և նպաստեց ընկալիչայի յաղթանակին այնքան շուտով:

Գերմանիան, որ իր ամբողջ քաղաքական կեանքի ընթացքում միայն այս յեղափոխութիւնն է ունեցել, որ կրում է իր վրայ քիչ թէ շատ դրօշմ այն ազատագրական կռիւների, որոնցով այնքան հարուստ էր 19-րդ դարի միջին շրջանը, իր այս յեղափոխութեամբ չը կարողացաւ ամենևին թուլացնել ֆէօդալների զօրութիւնը, որը մինչև այժմ էլ—ամենից ուժեղ Պրուսիայում—ձանրացած է երկրի կրճ.քին և կախ ընկած ամեն մի յառաջադիմական քայլի յետևից հետզհետէ տանում է երկիրը դէպի ընկալիչայի խաւար թագաւորութիւնը: Իսկ լիբերալիզմը (աղատութիւնը), որ սկզբից և եթ այնքան վախկոտ ու կծծի դանւեց աշխատաւորութեան ամենատարրական պահանջների դիմաց, քանի դնաց իջաւ իր դէմօկրատիական բարձրութիւնից և այժմ դարձել է իւնկէր-ֆէօդալականութեան մի օգնականը նրա յետադիմական քայլերում և ուրիշ ոչինչ:

Եւ դա 48 թ-ի մարտի 18-ի կիսատ յեղափոխութեան հետևանքն է:

ՏԵՐՐՈՐԻ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐԵՒՍՈՒՑՔՈՒՄ

Իտալիայի սօց. կենար. օրգան „Avanti!“-ի խմբագրութիւնը իր ջերմ փաստաբանութիւնն է բերում տերրորական այն գործունէութեանը, որ Ռուսաստանի սօց. ըզվ-ական կուսակցութիւնը շարունակում է առաջ տղել անվկանդ յամառութեամբ և զարմանալի անձնուրացութեամբ:

«Մարդիկ, որոնք զազափարի մարտիրոսներ են, յաճախ մեզ ձօտ ևս հուշակուում են իբրև մարդասպաններ... և այդպէս հուշակոյները մոռանում են, որ Իտալիայի անկախութեան պատմութիւնը դրւած է նոյն տեսակ մարդասպանների արիւնով...»

«Մակայն, երբ մենք դատում ենք Ռուսաստանի տերրորիստներին, չենք էլ ղեկավարում սոսկ զգացմունքներով այլ և քաղաքական ու սօցիալական նկատումներով:

«Մենք կարծում ենք, որ այնտեղ ուր պետութիւնը ընդդիմադրում է բանտն ու կախաղանը խաղաղ գործունէութեան ամեն մի ձևին, այնտեղ ուր անհնարին է քաղաքակիրթ ձևի կռիւը յանուն մարդկային տարրական իրաւունքների: այնտեղ ուր պաշտօնապէս հաւաքում ու կազմակերպում են ազգաբնակչութեան վատթարագոյն տակաւնները և քլում նրանց դէպի թալան, հրդեհհուճներ ու ըսպանութիւններ,—այնտեղ, մեր կարծիքով, միանգամայն արդարացի ու օրինաւոր է տերրորական գործունէութիւնը, ղիւնւած, խուլ, յամառ ու անողորմ կուլի այդ ձևը...»

«Այս թէ ինչու մենք լիաբուռ ծաղիկներ կը նետենք ամեն մի փոսի մէջ, որ կը բացւի Ռուսաստանում մի նոր նահատակ ամփոփելու համար և իզորձ կը դնենք մեր զգացմունքները այս նահատակների ստորագրութեամբ: Շա...»

տերը նրանցից ամեն օր ճշուժ, բռնութիւն են դարձ դընուժ իրենց հոգու բնադրական բարութեան վրայ... Հարկադրած կառավարութեան կոյր գաղանթութիւնից՝ նրանք մյուս են մահաւան և աւերածի աշխատանքը, մինչդեռ երազում են սիրո՛ւ ու արդարութեան մի աշխարհ...»

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԱԿԵԴՈՆԻԱ.—Աւստրիոյ թատերական հարւածը, հիւսիսային Մակեդոնիոյ մէջ երկաթուղու արտօնութիւն ձեռք բերելով, իրարանցում առաջ բերաւ մամուլի և դիւանագիտական աշխարհին մէջ: Ամէն կողմէ սկսան թափիչ սուլթանի վրայ և նոր գծերու արտօնութիւններ պահանջել:

Աւստրիան Միւրցշթէկի համաձայնութեան օրհասական հարւածը կուտար և իր միակողմանի շահասնդրութեան հետեւանքով—որուն կոնակը: Գերմանիան կը նշմարէր—Մակեդոնական հարցին շուրջ կուրազուէր քաղաքական նոր «համաստեղութիւններ»: Անգլո-ռուս համաձայնութիւնը աւելի կը շեշտէր և խտրական կը մօտենար Ռուսաստանին:

Անգլիոյ առաջարկը Մակեդոնիոյ անկախ ընդհ. կառավարիչ մը կարգելու մասին, վայնասուն առաջ բերաւ գերմանական և աւստրիական մամուլին մէջ՝ որոնք «անգործագրելի» կը համարին զայն և կը յայտարարեն որ այդ ծրագիրը պարզապէս կը նշանակէ ըսել Թիւրքիային «յոյսդ կտրէ» Մակեդոնիային»:

Գերմանիոյ նախարարապետը, չուզելով որ Վիյոմի «մեծ բարեկամը» սուլթան, Անգլիոյ քաղաքական ըսպառնալիքին տակ ընկճւի, խորհրդարանի ճառին մէջ սլաքներ ուղղելով Անգլիային, շոյեց սուլթանը՝ յայտարարելով որ Անգլիոյ ծրագիրը կը վտանգէ սուլթանի վեհապետութիւնը և.. կարող է Թիւրքիոյ իսլամ ժողովուրդը մղել յուսահատական դիմադրութեան... Թէ *status quo*-ն տէրութեանց համաձայնութեանց հիմը կազմելու է... Թէ երկաթուղիները կը նպաստեն քաղաքակրթութեան յառաջդիմութեանը այդ երկիրներու մէջ և այլն: Գերմանական մամուլը նոյն շոգմոգ լեզուն կը բանեցնէ Թէ «Թիւրքերը պիտի նախընտրեն զէն իձեռնին կորսնցնել Մակեդոնիան»:

Պուլկարները կը ծափահարեն Անգլիոյ ծրագիրը. իսկ յունական մամուլը շատ հաշտ չերևի, և ողջուներ էտ. Վրէյի ծրագիրը, այլ կը պահանջէ որ կատարելիք բարենորոգումները յարգեն անձնւր. ժողովուրդի իրաւունքները, այսինքն սահմանագծւին ազգութիւնները, ապա Թէ ոչ Մակեդոնիան արիւն լայ դաշտը կը մնայ ազգայնական կռիւներու...:

Անգլիական Խորհրդարանի 104 անդամներ վճռած են ուժ տալ Մակեդոնիոյ մէջ «անկախ կառավարիչ» մը կարգելու համար, էտ. Վրէյի ծրագրին: Խտալիա յայտնելով որ Աւստրիոյ ձեռնարկը չի խանգարեր իրերու դրութիւնը, չվարանի պնդել որ ուրիշ ազգերն ալ նոյնքան իրաւունք ունին արտօնութիւններ ձեռք բերել Մակեդոնիոյ մէջ:

Ռուսիա՝ իբր համասլաութեան «մեծ ուկէանը» ուր պէտք է թափւին բոլոր սլաւ գետերը՝ ինչպէս կըսէ ռուս բանաստեղծ մը, ազատագրելով Աւստրիայէն, ու-

րուն լուծած կը քեշնէր, կը ջանայ իր ինքնուրոյնութիւնը վերստանալ «սլաւ եղբայրներու»... Հասերը պաշտպանելու համար: Ինք «պարկեշտ միջնորդի» դեր ստանձնելով կառաջարկէ ուրիշ ծրագիր մը որ իբր Թէ Անգլիոյ և Միւրցշթէկի ծրագիրները հաշտեցնելու բնոյթը ունի: Այդ ծրագրով, Ռուսաստանը կը ձգտի Մակեդոնիան վեց տէրութիւններու կոնտրոլին և իրաւասութեան տակ դնել, որ հրաժարիմքն է Աւստրո-ռուսական միսիօնին:

Թիւրքիան գոհ է որ ծրագիրները կը շատնան, որով Թէ ինք ժամանակ կը շահի, և Թէ խնդրին լուծումը կուշանայ:

Գերմանիոյ կայսրը, Մակեդոնիոյ հարցին առթիւ երրեակ դաշնակցութեան մէջ առաջ եկած թուլցած տրամադրութիւնները կարկտելու համար, վենետիկի մէջ քաղաքական կարևոր տեսակցութիւն ունեցաւ Իտալիոյ թագաւորին հետ: Քայքայելու ըսած է որ Պալքանեան հարցի բոլոր որոշումներուն մէջ պիտի ներշնչւի «գէպի սուլթանը ունեցած մեծ բարեկամութենէն»:

Վիյոմ Վենետիկէն անցաւ դէպի Քորֆու, իր ամպամած ուղեղը պարզելու համար: Անկէ պիտի այցելէ Ալպանիա՝ արդէն սուլթանը ընդունելութիւն կը պատրաստէ անոր: Հաւանական է Հիլիպէդարներու երկիրը մտնելէ առաջ, ճառ մը գոց ըրած է... «Սուլթաններով համեմաւ. ուր պիտի յիշէ այլպանացիներու խրոխտ անցեալը, պատերազմական ոգին, Պիւռոսը, Իսկէնդէր բէկը, արիւնուշտ Ալի փաշան, և վերջապէս աւատական բէկերու անձնասիրութիւնը խողտացնող և սիրաշահող Փրագներ, ասպագայ նկատումներով և որոնք արձագանք պիտի գտնեն Եպիրոսի լեռնաշղթաներուն մէջ: Պիտի հռչակէ թերևս, որ «ալմանները» և «ալպանները» նոյն ծագումն ունին: Եւ նոյն կատարգութիւնը պիտի կրկնէ ինչ որ ըրաւ Համի մէջ, Սալահէդդինի գերեզմանին վրայ իր տափակ և ուռուցիկ խօսքերը ուղղելով ամբողջ աշխարհի իր... «բարեկամ միւսիւլմաններուն»:

Ա Մ Ս Ա Ղ Ո Ւ Ր Ե Ր

Պոյսէն պաշտօնական հեռագիր մը կը ծանուցանէ Թէ բազմաթիւ ձեռքաւարութիւններ կատարւած են, որպէս Թէ դաւադրութիւն մը գտնուած է:

Չերբակալածներէն մէկը պելճիգացի մըն է, որը Պելճիգայի դեպպանը կը ջանայ ազատել:

Գաւադրութեան քննութիւնը Երվրդի մէջ կը կատարուի: Գաւադրութեան մասին ռուսական դեսպանատան թարգմանը կուզէն լսել, ռուսական դեսպանը մերժեց և բողոքեց:

Պոլիս մարտ 25.—Հայերու և ռուսներու մէջ դաւադրութեան մը հետքերը գտնուած են: Սամի պէյ, ծովային սպայ մը, ու սուլթանի մօտ նկարչութիւն կընէ, ձեռքաւարութեան Ռուսական դեսպանը այժմ՝ կըբաղի այդ գործով: Երկու ռուսահայատակներ ձեռքաւարւած են:

Վելանիկի մէջ բաւական թուով իրաւագիտական ուսանողներ և սպաներ ձեռքաւարւած են, իբր Թէ Երիտասարդ Թիւրքերու հետ յորաբերութիւն ունին և կուզեն տնայալի ներկայ ռէժիմը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

Տ Ե Ր Ր Օ Ր

Հ. Յ. Դաշնակցութեան Կովկասեան Ահաբեկիչ Մարմնի վճռով ահաբեկումի ենթարկեց Օսմանեան Հայաստանի Բուլանը զաւարի Կոփի գիւղացի Մխիթար Բաւօեանը (Մխօ), իր կատարած մատուցած ծախսերի, բռնաբարութիւնների և իր համագիւղացիները վրայ գործ դրած անլուր կեղեքումների համար:

Երկրի և Կովկասի դաշնակցական մարմինների հաղորդած տեղեկութիւններից, իմչպէս և կատարած հարցաքննութիւններից երևաց, որ Բաւօեան Մխիթարը Կոփի գիւղում իր երկարամեայ գրագրութեան միջոցիմ կատարած է, իմիչի այլոց, հետեւեալները.

1) Նորածին երեխաների ծնունդը մատնել է կառավարութեան զլխահարկի ենթարկելու համար նրանց: Յղի կանանց արծամագրել տւած է, իբրև տղայ զաւակ բերողներ՝ նոյն նպատակով:

2) Վաղուց մեռած մարդիկ իբրև ողջ յայտարարելով, նրանց տուրքը գանձել տւած է ազգակամներից:

3) Կոփի գիւղը ապաստանած բազմաթիւ ոչտուռի պատուիրակները իբրև տեղացի արծամագրել տւած է, նրանցից տուրք առնելու համար: Նրանց փախչելուց յետոյ, այդ արծամագրութեան գորութեամբ, Կոփի գիւղը մինչև այսօր էլ վճարում է նրանց տուրքը:

4) Օլամը միշտ բեռցնում էր խեղճ և աղքատ գիւղացիների վրայ: 1899-ին գիւղացիներին ստիպեց ձրի փոխադրելու պետական ցորենը, և կառավարութիւնից ստացւած փոխադրագինը 15,000 դրուշ ինքը գրպանը դրեց: Երբ բողոքողներ եղան, նրանց մատնեց իբրև սուլթանիմ հայհոյողների:

5) Տուրքերի հաւաքման ժամանակ, չունեցողներին ստիպում էր փոխ առնել զիմուրներից, մէկ մէհիտի փոխարէմ մէկ քիլէ ցորեն սալաֆ տալու պայմանով:

6) Գրագրութիւնից երբ պաշտօնակ եղաւ, կառավարութեան պարտք դուրս ելաւ մօտ 60,000 դրուրուշ, որը գանձեց իր «երաշխաւորներից», որոնց կնիքները կեղծած էր, նրանց տուրմ ու արտերը ծախու համեւելով:

7) Հարկահանութեան միջոցիմ, Մխօմ միանալով հարկահանների հետ, կատարում էր ամեն տեսակ լրբութիւն անպաշտպան կամ այրի կանանց մկատմամբ:

8) Յականէ-յանամէ յայտմի են բռնաբարութեան իմը դէպքեր, կատարած Մխօի ձեռքով, վկաներով հաստատուած:

9) Մխօմ հալածում էր յեղափոխական երիտասարդներիմ, հմուտ լինելով նրանց բռնելու ժողովի միջոցիմ:

10) Նրա մատուցած մար յեղափոխական բամտարկեցիմ չորս գիւղացիք, որոնցից երկուսը մեռան բամտում, միւս երկուսը 101 տարւամ բամտարկութեան դատապարտութիւն են կրում այժմս:

Ահաբեկիչ մարմինը, հիմնաւոր և ապացուցւած գտնելով բոլոր ամբաստանութիւնները, որոնց զլխաւորները միայմ առաջ բերած են այստեղ—արծակեց մահամ դատավճիռ:

Հ. Յ. Դ.

ԱՀԱԲԵԿԻՉ ՄԱՐՄԻՆ

Համաձայմ Հնդհամուր ժողովի որոշմամ Վարդօիմ եղած պաշտօնական դիմումիմ՝ որ իւրացուցած 12112 ֆրանկ գումարը վերադարձէ կազմակերպութեան և նա մերժած ըլլալով:

Հ. Յ. Դ. Ահաբեկիչ մարմինը իրեն դէմ կայացած մահամ վճիռը գործադրեց Ռուսչուքի մէջ 1907 թոյ. 22-իմ: Ահաբեկիչը ազատ է:

Հ. Յ. Դ.

ԱՀԱԲԵԿԻՉ ՄԱՐՄԻՆ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Արեւմտեան Բիւրօն ստացած է՝

Զ ի ք եր ի ա.—Ներ մեհեմայագործ Գրիգորէն 5 ճր.: Ա. Մեւրպեանէն 5 ճր.:

Յ ու ճ ա ս ս ս.—Չանքայէն և, Մարկոսեան 5 ճր., Մեհ. Մարկոսեանէն 5 ճր.:

Գումար 20 ճրանկ:

Ոսկանագասի Կեհեր. կոմիտէն՝

ԱՆԴՐԱՊԱՏԻ ԿՕՄԻՏԵՆ.—Ունեցել է մոտ 1906 թ. յունիարի 1-ից մինչև մայիսի 30-ը: Հետեւալ խմբերից՝ Մերովք փաւա 40 ռուբլի 80 կոպէկ, Անդրանիկ 35, Բաբկէն-Սիւնի 13. 45, Վազգէն 35. 80, Կայծակ 7. 40, Պեօ 41. 75, Տալուրիկ 32, Արս 101. 50, Թուման 37, Կոկոն 8. 5, Արիստ 6, Արիստաւորաց 114, Դժոխ 4. 50, Յասմիկ 24, Գանձակ 10. 95, Կարօ 19. 95, Զաւայանց 30, Յաֆոս 5, Սազարս 7, Լոյս 6, Արալոյս 2. 20, Նօրէն 6. 60, Գրօսակ 8. 25, Երկաք 3. 40, Շամիրամ 26. 70: Ներաւաւորիմ և հանգանակութիւն՝ Յ. Ասմց 200, Դարսի մէջ հանգ. 18, Յ. Սուլի 50, Բ. Շոհն. 5. նրա միջ. հարսանիքում հանգ. 10, Զալ 60, Լադար 23, Սօս յս. Աւազի ենթակ. 146, Սահմանաբերդի ենթակ. 485, Թուման յս. Երեկ. 98, Վազգէն յս. Երեկ. 116, Զինավանառումից ստացւած 276. 80: Գումար 2,122 ռուբլի 11 կոպէկ: 1906 թ. յունիարի 1-ից մինչև 26 ապրիլ 1907 թ. հետեւալ խմբերից՝ Արսու 7 ռուբլի 50 կ., Բաւարխան 2. 30, Թուման 6. 50, Վազգէն 12. 35, Պեօ 11. 75, Կոկոն 2. 35, Գորքան 48, Եփրատ 2. 20, Նորէն 9. 90, Թուման 6. 50, Անդրանիկ 8, Մերովք փաւա 6, Ազատ 126, Վազգէն 9. 50, Անդրանիկ 9. 70, Տալուրիկ 9. Կարօ 12, Թուման 6. 50. Կոկոն 3, Ես 2. 70, Վազգէն 8. 30, Թաղար 3. 50, Թուման 5, Նորէն 6. 20, Ազատ 60, Տալուրիկ 10, Դազիան 7. 60, Վազգէն 12, Նորէն 3. 95, Թուման 8, Կոկոն 10. 15, Մերովք փաւա 34. 25, Բաբկէն-Սիւնի 11. 50, Վազգէն 13. 50, Կարօ 12. 5, Թուման 8, Անդրանիկ 43. 65, Փորքի 5. 85, Ապառիկներ 6. 50, Աւեթիս Մ. տուգանք 3, Վազգէն յս. ներկայացումից 57. 78, Արախ ենթակէից 35. 50, Երեկոյից մնացած 9. 55, Արիստաւորաց ա) 36. 75, Ես ա), բ) 41. 50, Վանառւած գրեթից 23. 33: Ընդհ. գումար 2900 ռուբլի 27 կոպէկ:

Մ Ե Ծ Ա Դ Ի Բ . Պ Ա Տ Կ Ե Ի Ն Ե Ր

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶՏԱՄԱՐՏԸ — ա լ լ է գ ո ը ի — հատը 1 Յր.

ԿՕԶԱԿԱՅԻՆ ՄԱՐՍԱՓՆԵՐ (ֆրանս. ծանօթութեամբ) — 50 ս.

Մերովքի, Թորգոմի, Պետոյի,
Մերովքի և որդոց, Խամի, Կարօի,
Հրայրի, Զրիստափոքի, Բաբկէնի:
Վահանի, Կայծակի,
Հատը 50 սանտիմ, իսկ սերիմ (13 հատը) 5 ֆր.

Դիմել՝ «Դրօշակի» խմբագրութեան, Ժ ը ն ե վ :